

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԿՈՂՄԵ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՒ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Նոյեմբեր 10-ին կայացած իշխող Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) 11-րդ համագումարի ընթացքին,

Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյան պաշտոնապես առաջադրուեցաւ նախագահի թեկնածու: Համագումարը նաեւ, միաձայնութեամբ Սերժ Սարգսյանը ընտրեց Հանրապետական կուսակցության նախագահ:

Համագումարի պատգամաւորներուն առջեւ իր ունեցած ելոյթի ընթացքին Սերժ Սարգսյան բաւական երկար անդրադարձաւ առաջին նախագահ Լեւոն Տր-Պետրոսեանի մասին:

«ՀՀԿ կուսակցութեան հոգեւոր հայրը՝ Լեւոն Տր-Պետրոսեանը, հաւաքոյթներէից մէկում ի լուր աշխարհի յայտարարում է, թէ կազմաքանդելու են պետական բուրգը: Զաւեշտականն այն է, որ Լեւոն Տր-Պետրոսեանը այնքան է կորցրել իրատեսութիւնը, որ հաւատում է ռեւանշի, եւ նոյնիսկ խորհուրդ է տալիս հանրապետութեան նախագահ Ռոբերտ Բոչարեանին եւ ինձ հեռանալ քաղաքական աս-»



վարչապետ Սերժ Սարգսյան

պարէզից», - ըսաւ Սերժ Սարգսյան՝ շարունակելով. - «Պարտք չմնալու համար մի խորհուրդ էլ ես տամ նրան. լաւ կը լինէր, որ նա մեղայ գար, ներողութիւն խնդրէր հայ ժողովրդից իր գործած, մեղմ ասած, սխալների համար: Վստահ եմ՝ չի անի, որովհետեւ նա լեցուն է չարութեամբ, եւ անդառնալի-»

րէն հետ է մնացել կեանքի ընթացքից»:

«Ուզում են կազմաքանդել պետութիւնը... Ձի ստացուի: Ցանկացած փորձ կը կանխուի», - աւելցուց Սերժ Սարգսյան: - «Այս ամէնի մէջ լաւն այն է, որ մեր ժողովուրդը հարաւորութիւն ստացաւ համոզուելու, որ մենք տարբեր մարդիկ ենք: Եւ եթէ այս տասը տարիների ընթացքում քաղաքական գնահատականներ չենք հնչեցրել, ապա պատճառը միայն ու միայն հասարակութեան մէջ աւելորդ լարուածութիւն չմտնելու ցանկութիւնն էր»:

Սերժ Սարգսյան իր ելոյթի ընթացքին խոստացաւ անհանդուրժողական վերաբերմունք կուսակցիցի դէմ, իրաւապահ մարմիններէն պահանջելով հապտախտացնել պաշարը կուսակցիցի դէմ: Ան յայտնեց որ, հարկերէ

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՓԵՏՐՈՒՄ 19-ԻՆ

Հայաստանի նախագահական ընտրութիւնները տեղի կ'ունենան 2008-ի Փետրուար 19-ին: Այս մասին պաշտոնապէս յայտարարեց Կենտրոնական Ընտրական Ցանձնաժողովի (ԿԸՑ) նախագահ Գարեգին Ազարեան:

«Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրէնսգիրքի 88-րդ յօդուածի երկրորդ մասի համաձայն՝ լիազօրուած եմ յայտնել, որ հանրապետութեան նախագահի ընտրութիւնները, համաձայն Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 51-րդ յօդուածի, տեղի կ'ունենան 2008 թուականի Փետրուարի 19-ին», - ըսաւ Գարեգին Ազարեան: Ան աւելցուց որ նախագահի ընտրութեան օրը կը յայտարարուի ոչ աշխատանքային օր:

Ընտրուած յաջորդ նախագահը իր պաշտօնը պիտի ստանձնէ Ապրիլ 9-ին:

«ՀԱՅՈՐԴԱՑ»Ը ՇՈՒՐՋ ԵՐԿՈՒ ԺԱՍ ՍԱԳՆԻՍԱՑՈՒՑ ՆԵՐԿԱՅ ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱՍԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ



ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի հովանաւորութեան տակ, Շաբաթ 10 Նոյեմբեր 2007, երեկոյան ժամը 8:00-ին, Հ.Բ.Ը. Մ.ի Փաստօրինայի կեդրոնի հանդիսարանին մէջ, տեղի ունեցաւ «Հայորդաց» ի անդրանիկ ելոյթը, որ իր բարձր որակի գեղարուեստական կատարողութեամբ եզակի տպաւորութիւն թողուց ներկայ հասարակութեան վրայ:

Բազմասեռ էր երկու մասէ բաղկացող ներկայ գեղարուեստական յայտագիրը: Իրարմէ տրամազօրէն տարբերող մէկ համոց-թէն միւսին անցումը կը կատարուէր տաքուկ, ներդաշնակ ու սահուն եղանակով:

«Նարեկ» պարային համոցը, որ մասնակցած է հայրենական

բազմաթիւ փառատօներու, իր կատարողական ցանկին մէջ ունէր Արա Գեորգեանի «Կիլիկեան», «Գնչուական», «Գեղամիջին», «Իսպանական», Վարդան Խաչատրեանի մշակոյթով՝ «Վահագն», «Հայկական Պարերի Շարանը», «Ձան Գուլում», Կոմիտասի «Իլիկ» եւ «Վրացական»:

«Հայկազունք» ազգագրական համոցը՝ հանդէս եկաւ «Արի Սիրուն Գնա Սիրուն», «Երկու Քոյր Ենք», «Քնօ», «Ղափամա», «Ցնծայ, Ով Հայ» ժողովրդական երգերու ու պարերու կատարողութիւններով:

Նկատելին՝ «Նարեկ»-ի եւ «Հայկազունք»-ի ժողովրդային ու ազգագրական պար ու երգերը մէջ ընդ մէջ կը ծաղկեցուէին իւրաքանչիւր «Նորք»-ի կրկնային, «Ասուպ ստեպ»-ի եւ «Դհոյաւարներ»-ու համոցներու հրաշագործ կատարո-

Շաբ.ը էջ 16

ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՈՒ ԽՈՇՏԱՆԳՈՒԱԾ ԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ

Նոյեմբեր 12-ի երեկոյան Երեւանի մէջ թուրքիկներ փակցնելու պահուն ձերբակալուած են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տիրունի» ուսանողական միութեան ատենապետ Նարեկ Գալստեան եւ միութեան անդամ Էդմոն Մակարեան, որոնք երեք ժամ ոստիկանութեան Կենտրոնի բաժինը պահուելէ ետք ազատ արձակուած են:

«Գիշերը Օպերայի հատուածում մեզ ձերբակալեցին եւ տարան Կենտրոնի քաղմաս՝ թուրքիկներ փակցնելու հետ կապուած: Դրանք թուրքիկներ էին, որտեղ վերելք վարչապետ Սերժ Սարգսյանի նկարն էր, վրան խաչ էր արուած եւ տակն էլ գրուած էր՝ «Սարգսյան Սերժին հայր կը մերժի», - «Ազատութիւն» ուստիոյանին պատմած է Նարեկ Գալստեան. - «Ձերբակալեցին, տարան, պահեցին, այնուհետեւ բացատրութիւն վերցնելուց յետոյ բաց թողեցին: Ժամը 23:00-23:30-ի կողմերը ձերբակալուել էինք, 2:20-ի կողմերը, երբ արդէն հաւաքուած էր բազմութիւնը, եւ նաեւ մեր ծնողները եկան, բաց թողեցին»:

Մեզի հետ հեռախօսային գրոցի ընթացքին ԸՆԿ. Գալստեան տեղեկացուց, որ իրենց նկատմամբ գործադրուած է նաեւ ֆիզիքական բռնութիւն: Ցատկապէս դաժան ծեծի ենթարկուած է ԸՆԿ. Էդմոն Մանուկեան:

«Սարգիս Տիրունի» ուսանողական միութեան ատենապետը



Նարեկ Գալստեան

ուստիոյանին յայտնած որ, իրենք կը փորձեն թուրքիկներու միջոցով իրենց տեսակէտը յայտնել յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն հետ կապուած՝ «ուրիշ PR-միջոց չգտնելով պաշարելու կամ մեր տեսակէտը յայտնելու, որովհետեւ բոլոր էլեկտրոնային լրատուամիջոցները գտնուած են իշխանութիւնների վերահսկողութեան ներքոյ»:

Նարեկ Գալստեան «Ա1+»-ին յայտնած է որ, իրենք պիտի շարունակեն պաշարել, որպէսզի երկրէն ներս ըլլայ ժողովրդավարութիւն:

«Բոլորս մարտական ենք տրամադրուած եւ պէտք է աշխատենք յառաջիկայ հանրահաւաքի համար», - ըսած է Հնչակեան երիտասարդական միութեան ատենապետը:

ԼՈՒՐԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽԽՕՍՆԱԿ ԸՆՏՐՈՒԵՑ ԱՐԵՒԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ազգային ժողովի Նոյեմբեր 12-ի նիստում խորհրդարանի փոխնախագահ ընտրուեց «Բարգաւած Հայաստան» խմբակցութեան ներկայացուցիչ Արեւիկ Պետրոսեանը, ով մինչ այդ ղեկավարում էր մարդու իրաւունքների խորհրդարանական յանձնաժողովը: Նրա թեկնածութեանը կողմ քուէարկեցին 79, դէմ՝ 13 պատգամաւորներ:



Խորհրդարանի փոխնախագահ ընտրուած՝ Արեւիկ Պետրոսեան

Փոխիւսանակի պաշտօնը թափուր էր մնում Նոյեմբերի 6-ից, երբ այն զբաղեցնող՝ «Բարգաւած Հայաստան»-ի ներկայացուցիչ Իշխան Զաքարեանը նշանակուեց վերահսկիչ պալատի նախագահ:

Արեւիկ Պետրոսեանի թեկնածութիւնը «Բարգաւած Հայաստան» խմբակցութեան անունից առաջադրեց խմբակցութեան քարտուղար Արամ Սաֆարեանը: «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Րաֆֆի Յովհաննիսեանը առաջադրեց խմբակցութեան անդամ Անահիտ Բախչեանի, իսկ «Օրինաց երկիր» խմբակցութեան քարտուղար Հեղինէ Բիշարեանը՝ հանրապետական պատգամաւոր, գի-

տութեան, կրթութեան, մշակութի, երիտասարդութեան եւ սպորտի հարցերի խորհրդարանական յանձնաժողովի նախագահ Հրանտ Զակոբեանի թեկնածութիւնը:

Յակոբեանը ինքնաբացարկ յայտնեց՝ պատճառների թուում նշելով նաեւ այն հանգամանքը, որ այդ տեղը կոալիցիոն յուշագրով յատկացուած է «Բարգաւած Հայաստան»-ին:

Այսպիսով, Ազգային ժողովի փոխիւսանակի պաշտօնը կ'զբաղեցնի կին պատգամաւոր, ինչը աննախադէպ է:

ՍՈՒՔԻԱՍԵԱՆՈՎ ՄՏԱՅՈՒԳՈՒԱԾ ԵՆ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Նոյեմբեր 13-ի առաւօտեան 6-րդ վարչութեան աշխատակիցները «այցելել են» Սուքիասեանների ընտանիքին պատկանող մէկ այլ ձեռնարկութիւն՝ «Նորշին»: Նրանք բերման են ենթարկել ընկերութեան պահակին, ապա նաեւ ձեռնարկութեան հաշուապահին տնից հրաւիրել են 6-րդ վարչութիւն՝ պարզաբանումներ տալու:

Այս պահի դրութեամբ «Սուքիասեանների գործով» ձեռքարկուած է մէկ հոգի՝ «Պիցցա Դի Ռոմա»-ի տնօրէն Գէորգ Սաֆարեանը, ում դէմ ցուցմունքներ վարչութիւնը կորզել է անփորձ եւ երիտասարդ աղջիկներին վախեցնելու ճանապարհով: Ինչպէս «Սիլ կոնցենտր» լրատուական ծառայութիւնից տեղեկացանք, աղջիկները հոգեբանական տարբեր ճնշումների են ենթարկուել եւ ցուցմունք գրել, ապա դիմել են ընդհուպ մինչեւ նախագահի աշխատակազմ՝ տեղեկացնելով, որ իրենք վախի ազդեցութեան տակ են ոչ հիմնաւոր ցուցմունքներ տուել:

«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւորները պարբերաբար, այսօր եւս ԱԺ-ում բարձրացրին Սուքիասեաններին քաղաքական հալածանքի եւ ճնշումների ենթարկելու հարցը: Քաղաքական ճնշումների փաստը հիմնաւորուած է նրանով, որ որեւէ այլ խոշոր

հարկատուի մօտ ստուգում չի իրականացուած: Իսկ Սուքիասեանների մօտ ստուգումներն իրականացուած են անհիմն եւ պարբերաբար:

Յիշեցնենք, որ Սուքիասեանների դէմ արշաւը սկսուեց այն բանից յետոյ, երբ Խաչատուր Սուքիասեանը բացառապէս յայտարարեց իր քաղաքական համակրանքի մասին: Այսօր էլ Սուքիասեանը չի փոխել իր դիրքորոշումը: Փոխարէնն արդէն մեր երկրում հաւատարմագրուած դիւանագիտական կորպուսի բոլոր ներկայացուցիչներն են հետաքրքրուած Սուքիասեանի նկատմամբ կիրառուող մեթոդներով: Իսկ միջազգային կառույցները խորհուրդներ են տալիս եւ աջակցութիւն առաջարկում:

Ի դէպ, այս օրերին Սուքիասեանների բիզնեսը կրում է հսկայական վնասներ ոչ միայն այն պատճառով, որ ապրանքը չի դրուած վաճառքի, այլեւ գովազդում է այն ապրանքը, որը բացակայում է խանութներում, իսկ գովազդի համար ընկերութիւնը վճարում է: «Սիլ կոնցենտր» լրատուական ծառայութիւնից տեղեկացանք, որ ոչ միայն իրաւապաշտպան, միջազգային կազմակերպութիւնների, ղեկավարների ներկայացուցիչներ են զանգարահարում եւ այցելում, այլեւ իրենց օգնութիւնն ու աջակցութիւնն են առաջարկում բազմաթիւ քաղաքացիներ:

«ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՊԱՆՆԵՑԻՆ ՍԵՖԻԼԵԱՆԻ ՍՕՐԸ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Պէյրութում մահացել է Շուշիի գումարտակի հրամանատար, գնդապետ Ժիրայր Սեֆիլեանի մայրը՝ Միմա Թապալբեանը: Վերջինիս մի քանի օր առաջ տեղափոխել էին հիւանդանոց:

Նրա առողջական վիճակը վատացել էր դեռեւս նախորդ տարուայ Դեկտեմբերին, երբ իր ներկայութեամբ ԱԱԾ աշխատակիցները Երեւանում խուզարկել էին Ժիրայր Սեֆիլեանի բնակարանը: Ըստ նրա հարազատների՝ տիկնոջ վիճակն առաւել վատացել է «Հայլուրի» տարեվերջեան թողարկումներից մէկից յետոյ, երբ ցուցադրուել է Վահան Արոյեանի տանը յայտնաբերուած զինամթերքը՝ կարծիք յայտնելով, որ այդ ամէնը Ժիրայր Սեֆիլեանը պատրաստուած էր օգտագործել յեղաշրջում իրականացնելու համար:

«ՀՀ իշխանութիւնները սպաննեցին Ժիրայրի մօրը, գուցէ հիմա հանգստանան», - «Ա 1+»-ին ասաց Սեֆիլեանի կինը՝ Նանոր Սեֆիլեանը:

Յիշեցնենք, որ Ժիրայր Սեֆիլեանը գտնուած է «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկում:

ՀՊԾ-Ն ԱԻԱՐՏԵԼ Է ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ «ԳԱԼԱ» ԶԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հարկային Պետական Ծառայութիւնը (ՀՊԾ) աւարտել է ստուգումները Գիւմրիի «Գալա» հեռուստաընկերութիւնում եւ, ինչպէս փոխանցեցին ՀՊԾ-ի հասարակայնութեան հետ կապերի բաժնից, ստուգման արդիւնքները ուղարկելու են դատախազութիւն:



Ըստ ՀՊԾ-ի հասարակայնութեան հետ կապերի բաժնի՝ տարածած հաղորդագրութիւն, Գիւմրիի «Գալա» հեռուստաընկերութեան «Չապ» ՍՊԸ-ում իրականացուող՝ բիջէի հետ փոխյարաբերութիւնների ճշգրտութեան ստուգման արդիւնքում Հարկային Պետական Ծառայութիւնը յայտնաբերել է, որ 2005 թուականի Սեպտեմբերից մինչեւ 2007 թուականի Սեպտեմբեր ընկերութիւնը հեռուստատեսային գովազդային ծառայութիւնների մասով թաքցրել է իրացման շրջանառութեան իրական ծաւալները՝ խուսափելով իրական հարկային պարտաւորութիւններ բիջէի նկատմամբ կատարելուց:

Անցկացուած ստուգման արդիւնքում, ըստ հաղորդագրութեան, նշուած ժամանակահատուածում ընկերութեան լրացուցիչ հարկային պարտաւորութիւնները կազմել են շուրջ 26 միլիոն դրամ. - «Հարկային մարմինների ստուգման արդիւնքում պարզուել է նաեւ, որ «Չապ» ընկերութիւնը առանց նման գործունէութեան համար օրէնքով պահանջուող լիցենզիայի 2000-2001 ինչպէս նաեւ 2003-2004 թուականներին զբաղուել է «Բենգալեան կրակների» արտադրութեամբ:

«Չապ» ընկերութեան հիմնադիր նախագահ Վահան Խաչատրեանը «Ազատութիւն» ռադիո-ովայնի հետ զրոյցում ասաց, որ հաղորդագրութիւնում հիմնականում «սուտ ու սխալ բաներ են գրուած»:

Ինչ վերաբերում է շուրջ 26

միլիոն դրամ գումարի հարկային պարտաւորութիւններից խուսափելուն, ապա Խաչատրեանը նշեց. - «Այդ ծաւալները ո'չ ես գիտեմ, ոչ իրենք գիտեն, որովհետեւ ես չգիտեմ, թէ իրենք որտեղից են այդ թուերը վերցրել: Որովհետեւ այն թուերը, որ իրենք վերցրել էին Ամալեանի մօտից [Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովից - ՀՌԱՀ, չեն բռնուած այն թուերին, որ մենք ուղարկել ենք ՀՌԱՀ»:

Հարկային ծառայութեան տարածած հաղորդագրութիւնում տեղ գտած երեք փաստերից թերեւս մէկի հետ Վահան Խաչատրեանը համաձայն է, այն էլ՝ մասնակիօրէն: Նա չի ժխտում, որ զբաղուել է Բենգալեան կրակների արտադրութեամբ՝ «ամիս ու կէս 2000 թուականին»:

«Արտադրել ենք մօտ 11 հազար տուփ: Այն գներով դա կազմում էր մօտ 1000 դոլարի կարգի թիւ», - շարունակեց նա: - «Բաց ծիծաղելի է 7 տարի յետոյ ասել, որ զբաղուել են... Ես այդ արտադրութիւնից պետութեանը հարկեր եմ մուծել»:

Գիւմրիի «Գալա» հեռուստաընկերութիւնում ստուգումները սկսուեցին այն բանից յետոյ, երբ Հոկտեմբերի 14-ին «Գալա»-ն ամբողջութեամբ եթեր հեռարձակեց Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի Սեպտեմբերի 21-ի ելույթը:

«ԲԱՐԳԱՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ԲԱՅԱՌՈՒՄ Է ՍԱՅԱԴ ԴԱԹԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Բարգաւած Հայաստան» կուսակցութիւնը բացառում է կուսակցութեան անդամ, Հայաստանի որսորդների միութեան նախագահ Սայադ Դաթեանի սպանութեան «քաղաքական դրդապատճառները»:

Կուսակցութեան մամուլի խօսնակ Բաղդասար Մհերեանը նաեւ ասաց, թէ իրենք «պատկերացում չունեն, թէ ովքեր կարող էին սպանել Դաթեանին». - «Քանի դեռ ընթանում է գործի հետաքննութիւնը, որեւէ վարկած մենք չենք նշում, սակայն քաղաքական դրդապատճառը մենք բացառում ենք»:

«Բարգաւած Հայաստան»-ը թշնամիներ չունի: Մենք գործակցում ենք քաղաքական դաշտի լայն սպեկտրի կուսակցութիւնների հետ, կոալիցիայի անդամ ենք, նաեւ խորհրդարանում ենք ներկայացուած», - փաստարկեց Մհերեանը: - «Դժուար թէ այստեղ լինի քաղաքական պատճառ»:

Հայաստանի որսորդների միութեան նախագահ Սայադ Դաթեանը սպանուել էր Նոյեմբերի



Հայաստանի Որսորդների Միութեան նախագահ Սայադ Դաթեան

8-ին կոմիտաս փողոցի շուկային յարող տարածքում:

Հայաստանի ոստիկանութեան լրատուական ծառայութիւնից «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին, որ առայժմ ձեռքարկուածներ կամ կատաճեալներ չկան:

Յարուցուած քրէական գործի քննութիւնը վարում է մայրաքաղաքի Արաբկիր համայնքի ոստիկանութեան քննչական բաժինը:

ԼՈՒՐԵՐ

ԵՒՐՈՒԲԱՆԿԸ ԶԱՅԱՍՏԱՆԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ԱԻԵԼԻ ԱՐԴԻԻՆԱԿԷՏ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Վերականգնման եւ զարգացման եւրոպական բանկը անցումային շրջանում գտնուող երկրներին նուիրուած գեկոյցում Հայաստանին խորհուրդ է տալիս արդիւնաբերութեան ոլորտը աւելի բազմազան դարձնելու համար բարելաւել գործարար միջավայրն ու աւելի արդիւնաւէտ մրցակցային քաղաքականութիւն իրականացնել:

«Արտասահմանեան եւ տեղական ընկերութիւնները շարունակում են խոչընդոտների հանդիպել Հայաստանի տնտեսութեան հիմնական ճիւղեր մտնելիս, ինչը հականօրէն խանգարում է արդար մրցակցութեան ծաւալմանը», - արձանագրում է Եւրոպական բանկը իր գեկոյցում: - «Մրցակցութեան պակաս է գագացում յատկապէս մեծ պահանջարկ ունեցող ապրանքների շուկայում՝ հիմնականում այն պատճառով, որ որոշ մենաշնորհներ վերահսկում են լայն սպառման ապրանքների ներկրումը»:

Զեկոյցը յիշեցնում է, որ նախկինում Հայաստանը մի քանի անգամ դատուել է ԱՊՀ-ի անդամ այն երկրների շարքում, որտեղ խորհուրդ է տրուում զբաղուել գործարարութեամբ: «Սակայն կռուպցիայի դէմ պայքարով զբաղուող Transparency International միջազգային կազմակերպութեան վերջին գեկոյցը բացայայտել է, որ նախորդ երեք տարիներին Հայաստանում կաշառակերութեան ընկալման համաթիւրը աճել է», - նկատում է Եւրոպական բանկը:

Անդրադառնալով 2006 թուականին, ինչպէս նաեւ այս տարուայ

առաջին վեց ամիսներին արձանագրուած տնտեսական աճի ցուցանիշներին՝ գեկոյցը արձանագրում է, որ այդ աճի շարժիչ ուժը երկրում թափ առած լայնածաւալ շինարարութիւնն է, որը հիմնականում իրականացում է արտասահմանից փոխանցուող գումարների միջոցով: Փոխարէնը, արդիւնաբերութեան եւ գիւղատնտեսութեան ոլորտներում մի փոքր լճացում է նկատուում:

«Ընդհանուր առմամբ, մեծ պահանջարկ ունեցող ապրանքների շուկան շարունակում է մնալ սահմանափակ՝ թուրքիայի եւ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններ չունենալու պատճառով», - գրում են միջազգային փորձագէտներն ու յաւելում. - «Սա գործարարութեան զարգացման հիմնական խոչընդոտներից է, ընդ որում, ոչ միայն այն պատճառով, որ հայկական ապրանքները զրկուում են լայն շուկայ դուրս գալու հնարաւորութիւնից, տրանսպորտային ծախսերն էլ թանկանում են, այլեւ այն պատճառով, որ աւելանում է կախուածութիւնը արտօնեալ պայմաններով գումարներ տրամադրող դոնորներից ու միջազգային ֆինանսական կառույցներից»:

Վերականգնման եւ զարգացման եւրոպական բանկի գեկոյցը նաեւ փաստում է, որ ի տարբերութիւն անցումային շրջանում գտնուող այլ պետութիւնների՝ Հայաստանում աշխատավարձերը շարունակում են մնալ ցածր, միեւնոյն ժամանակ, շարունակում է մտահոգութեան տեղիք տալ հարկահաւաքման ցածր մակարդակը:

«ՂԱՐԱԲԱՂ» ԿՈՄԻՏԵԻ ՔՐԷԱԿԱՆ ԳՈՐԾ ԶԱՆՁՆՈՒԵԼ Է ԳԼԽԱԴՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹԵԱՆԸ

«Ղարաբաղ» կոմիտէի քրէական գործը շաբաթ օրը յանձնուել է Հայաստանի գլխաւոր դատախազութեանը:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց Գլխաւոր դատախազութեան մամուլի խօսնակ Սոնա Տուրքեանը, շաբաթ օրը Գլխաւոր դատախազութեան 5 աշխատակիցներ այցելել են առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի առանձնաստուան, կազմել են ստացման արձանագրութիւն եւ

Գլխաւոր դատախազութեան արխիւ են վերադարձրել «Ղարաբաղ» կոմիտէի քրէական գործի բոլոր 61 հատորները:

Գլխաւոր դատախազութեան արխիւից նշուած քրէական գործի անհետացման մասին յայտնի էր դարձել Հոկտեմբերի վերջին: Ուրբաթ օրը առաջին նախագահ Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ գործը գտնուում է իր մօտ, եւ պատրաստակամութիւն յայտնեց այն վերադարձնել դատախազութեանը:

ԵՐԿՈՒ ԹՈՒՐՔ ԶԻՆՈՒՈՐԻ ՍԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՅՈՒԵԼ ԶՐԱՆԴ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՎ

Երկու թուրք զինուորի իշխանութեան չարաշահման մեղադրանք է ներկայացուել «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Դինքի սպանութեան գործով:

«Ֆրանսպրես»-ի վկայութեամբ՝ այս երկու զինուորականները Տրապիզոն քաղաքի անվտանգութեան մարմինների առաջին ներկայացուցիչներն են, որոնց մեղադրանք է ներկայացուել Դինքի սպանութեան առնչութեամբ:

Այդ քաղաքի անվտանգութեան ուժերը մեղադրուում են հայազգի լրագրողի սպանութիւնը չկանխելու մէջ:

Մեղադրանքը թուրք զինուորներին ներկայացուել է այն բանից յետոյ, երբ սպանութեան ենթադրեալ կազմակերպչի ազգանակը յայտնել է ոստիկանութեանը, որ իր զարմիկը մտադիր է ատրճանակ գնել Դինքին սպանելու համար:

Առայժմ պարզ չէ, թէ երբ է սկսուելու դատավարութիւնը:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ Է ԶԱՅԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Բուլղարիայի վարչապետ Սերգէյ Ստանիշեւը Նոյեմբեր 13-ին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսեանի հետ համատեղ ասուլիսում իր երախտագիտութիւնը յայտնեց մօտ 11 հազար բուլղարահայերին, որոնք իրենց ներդրումն ունեն երկրի զարգացման գործում:

«Հայերը Բուլղարիա են եկել իրենց համար շատ ծանր իրավիճակում եւ կարողացել են Բուլղարիան ընդունել իրենց հայրենիքը եւ ներդրում կատարել: Բուլղարիայի հայերն այսօր կամուրջ են մեր երկու պետութիւնների միջեւ», - յայտարարեց Բուլղարիայի վարչապետը:

Հայ-բուլղարական յարաբերութիւնները զարգացնելու համար նոյն օրը Երեւանում երկու երկրների վարչապետները 5 միջկառավարական պայմանագիր են կնքել, որոնք, ենթադրուում են, կը խթանեն յարաբերութիւնների զարգացմանը:

Ի դէպ, սա Բուլղարիայի վարչապետ Սերգէյ Ստանիշեւի առաջին պաշտօնական այցն էր Հայաստան, որի ընթացքում նա պատրաստակամութիւն յայտնեց աջակցել ՀՀ-ին, ինչպէս տնտեսական, այնպէս էլ այլ ոլորտներում:

Այս տարուայ Յունուարից Բուլղարիան ԵՄ-ի լիարժէք անդամ եւ Ստանիշեւին խոստացաւ նաեւ ՀՀ-ի շահերը պաշտպանել ԵՄ-ի շրջանակներում. «Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան ծրագրի շրջանակներում արդէն իսկ ներկայացրել է համագործակցութեան որոշակի ծրագրեր»: Ի դէպ, Բուլղարիայի վարչապետին չի բաւարարում յատկապէս տնտեսական ոլորտում հայ-բուլղարական կապերը: Նախորդ տարի երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառութիւնը կազմել է 32 միլիոն դոլար, ինչը Ստանիշեւը համարում է ոչ բաւարար: Նրան չի գոհացնում նաեւ Բուլղարիայի եւ ՀՀ-ի միջեւ կնքուած՝ տարբեր ոլորտներին առնչուող 40



Սերգէյ Ստանիշեւ (ճախիմ) եւ Սերժ Սարգսեան մամուլային ասուլիսի ընթացքին

համաձայնագրերը: Այսօր Բուլղարիան ներդրումներ է կատարում մի շարք երկրներում եւ Սերգէյ Ստանիշեւը կարծում է, որ ՀՀ-ն կարող է բաւական գրաւիչ լինել նաեւ բուլղարացի գործարարների համար:

Ի պատասխան Բուլղարիայի կառավարութեան, որը 2004թ.-ին Բուլղարիայում անցկացրեց Հայկական մշակույթի օրեր, Սերժ Սարգսեանը մատադիր է Երեւանում բուլղարական մշակույթի օրեր անցկացնել 2008թ.-ին: Այս առաջարկութիւնը շոյել էր Սերգէյ Ստանիշեւին: «Բուլղարիայում շատ ջերմ վերաբերմունք կայ հայ համայնքի, հայ ժողովրդի պատմութեան եւ մշակույթի նկատմամբ, իսկ բուլղարահայ համայնքի շատ ներկայացուցիչներ իրենց գործունէութեամբ նպաստել են նաեւ բուլղարական մշակույթի զարգացմանը», - ժպտալով ասաց Բուլղարիայի վարչապետը: Ի դէպ, Բուլղարիայի վարչապետի յայտարարութիւնը գուտ քաղաքավարութեան դրսեւորում չէր: Բուլղարիան այն երկիրն է, որտեղ հայ հերոսների յիշատակը յաւերժացնուած է յուշարձանների միջոցով:

ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՆԱԽԱԳԱՎԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Շարունակուած էջ 1-էն

խուսափելը, կաշառակերութիւնը պէտք է դիտուին որպէս անպատուաբեր եւ հանրութեան կողմէ դատապարտելի երեւոյթ:

«Այս բոլոր իրականացնելու համար պարտաւոր ենք լաւ նախագահական ընտրութիւններ անցկացնել: Հաւաստիացնում եմ, որ ունենք բաւարար քաղաքական կամք, փորձառութիւն եւ կազմակերպութեան լիարժէք դարձնելու աշխարհում ձախից հնչող յոյսորտանքները», ըսաւ վարչապետ Սարգսեան:

Ըստ Սերժ Սարգսեանի՝ 5 տարի յետոյ բոլոր հայ ընտանիքներու եկամուտները պիտի կրկնապատկուին, իսկ ամէն մէկ նորաստեղծ ընտանիքի առիթ պիտի տրուի բնակարան եւ ինքնաշարժ ունենալու հնարաւորութիւն:

650 պատգամաւորներու եւ 1500 հրաւիրեալներու ներկայութեան, ՀՀ-ի համագումարը տեղի ունեցաւ «Դինամօ» մարզադահլիճէն ներս: ՀՀ-ի համագումարին առաջին ելոյթ ունեցողը Արարատեան հայրապետական թեմի առաջնորդ Նաւասարդ Արքեպիս-

կոպոս Կճոյեանն էր, որ ոչ թէ հոգեւոր առաջնորդի, այլ քաղաքական գործչի խօսք ուղղեց. «Անցեալը անցած է, եւ վերադարձ չունի, անցեալով ապագայ չի կարելի կառուցել. ով այդպէս է մտածում, ընկել է երեւակայութեան գիրկը: Անցեալը պէտք է յարգել, դասեր քաղել, բայց ապագան կառուցուած է ներկայով», - ըսաւ ան: Անդրադառնալով խորհրդարանական ընտրութիւններուն Արքեպիսկոպոսը յայտնեց, որ արդիւնքներէն աննախադէպ գոհ էին միջազգային դիտորդները, եւ դժգոհ են մարդիկ, «ովքեր չգիտեմ ինչ հոգեվիճակի մէջ են ընկել»: Նաւասարդ Կճոյեան հանրապետականներուն ըսաւ, որ մինչեւ հիմա ՀՀ-ն ժամանակի հետ էր, այսօր ժամանակն է ՀՀ-ի հետ:

Ողջոյնի խօսքերով հանդէս եկան Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեան եւ ՀՅԴ խմբակցութեան քարտուղար Հրայր Կարապետեան: Համագումարին ողջոյնի գիր չկարդացուեցաւ Ռոբերտ Քոչարեանի անունով, ինչպէս որ սովորութիւն էր ՀՀ-ի նախորդ համագումարներուն:

Massis Weekly on the Internet www.massisweekly.com updated every Friday

Ա.Դ.Շ.Կ. 120-ԱՄԵԱԿ

Ա.Դ.Շ.Կ. 120-ԱՄԵԱԿ ԱՐԺԱՆԻ՝ ԳՆԱՀԱՏԱՆՔ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԲԱՆ

Ս.Դ.Շ.Կ.ի 120-ամեակի առիթով կազմակերպված ձեռնարկներում եզրափակիչ տոնակատարությունը տեղի ունեցավ Նոյեմբեր 4, 2007, Կիրակի երեկոյան ժամը 6:00-ին, Glendale High School-ի սրահին մէջ, ի ներկայութեան հոծ եւ խանդավառ բազմութեան մը, եւ կազմակերպութեամբ շրջանիս վարիչ Մարմնի:

Հոս կ'ուզենք որոշ հաշուեփակ մը կատարել այն ձեռնարկներու, որոնք ամիսներու վրայ տեւող ժրջան աշխատանքներէ ետք տեղի ունեցան՝ այս պանծալի յոբելիանին առիթով: Եւ անգամ մը եւս փաստեցին մեր կուսակցութեան կենսունակութիւնը եւ հաւատքը դէպի պայծառ ապագայ, ի ծառայութիւն հայ ժողովրդի եւ անոր հայրենիքին:

Այս առիթով կ'արժէ յատուկ գնահատանք յայտնել Յոբելիանական այն Յանձնախումբին որ, վարիչ Մարմնի կողմէն, ծրագրեց եւ յաջողութեամբ գլուխ հանեց տարբեր բնոյթ ունեցող այն ձեռնարկները, որոնց մասին անդրադարձ կ'ըլլայ հոս:

25 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ՝ ՀՆՁԱԿԵԱՆ ՇԱՐՔԵՐԻՆ ԵՆՐՍ

Կարելի չէ երեւակայել աւելի մեծ իրազործում քան 25 երիտասարդ-երիտասարդուհիներու մուտքը կուսակցութեան մը շարքերէն ներս, յատկապէս մեր ապրած ժամանակներու ընդհանուր մթնոլորտի լոյսին տակ: Ընդհանրապէս, այսօր, նոր սերունդը հետամուտ է թեթեւ հաճոյքներու, եւ ընկերային այնպիսի կենցաղի, որ անյարիւր է լուրջ, մանաւանդ գաղափարական խորք ունեցող գործունէութեան հետ: Այս իմաստով, ուրեմն մեծապէս գնահատելի եւ խանդավառիչ կը նկատենք այն իրողութիւնը, որ կուսակցութեան մը 120-ամեակ տարեդարձին առիթով, 25 երիտասարդ-երիտասարդուհիներ կ'ուխտեն մաս կազմել շարքերուն եւ կուսակցութեան գաղափարախօսութեան, ծառայելու սեփական ժողովուրդին եւ հայրենիքին: Որեւէ անհատի կեանքէն ներս յանձնառութեան եւ պարտականութեան գիտակցութիւնը իսիստ շնորհաւորելի երեւոյթ մըն է, եւ այս իմաստով կ'արժէ գնահատել նորա-

գիրներու առած սոյն քայլը եւ յաջողութիւն մաղթել իրենց ազգին եւ կուսակցութեան ծառայութեան մէջ:

Նորագիրներու կուսակցութեանէն ներս մուտքի արարողութիւնը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 21ի երեկոյան, Փաստինայի կեդրոնէն ներս, ի ներկայութեան Ս.Դ.Շ.Կ. կեդրոնական վարչութեան ատենապետին եւ քարտուղարին, Ընկերներ Սեդրակ Աճէմեանին եւ Գրիգոր Խոտանեանին: Հաճելի գուզադիպութեամբ մը, արարողութեան ներկայ կը գտնուէր Լուիզիանա նահանգէն, կուսակցութեան մասնաճիւղէն ժրջան ատենապետ՝ Ընկ. Վազգէն Գալթագճեան: Ներկայ էին նաեւ շրջանի վարչութեան Մարմնի ընկերները: Նորագիրներու մուտքը կուսակցութեան շարքերէն ներս տեղի կ'ունենար կնքահայրութեամբ ընկերներ վահէ Աջապահեանի եւ Վարդան Քէօրոյլեանի:

Ողջոյն նորագիրներու եւ բարի գալուստ կուսակցութեան շարքերէն ներս:

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ Ս.Դ.Շ.Կ.ի Փարամագ Մասնաճիւղի, Շաբաթ, 20 Հոկտեմբեր 2007 երեկոյան ժամը 8:30էն սկսեալ, Հ.Մ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ ազգային եւ յեղափոխական երգերու բացառիկ երեկոյ մը, կուսակցութեան 120-ամեակի առիթով, ի ներկայութեան խանդավառ եւ հաւատաւոր ընկերընկերուհիներու եւ համակրական շրջանակի: Երեկոյն պիտի խանդավառուած՝ սիրուած երգիչ Մամուէլ Վարդանեան եւ Լոս Անճելոսէն Հրաչ Պողարեան, իր նուագախումբով: Բացառիկ յաջող երեկոյ մըն էր, որ ներկաներուն սրտերը լեցուց հայրենասիրական բարձր զգացումներով եւ տեւեց մինչեւ առաւօտեան փոքր ժամերը: Ձեռնարկի խանդավառ մթնոլորտէն ներշնչուած՝ եղան սրտաբուխ նուիրատուութիւններ:

Իսկապէս անկեղծ վայելքի երեկոյ մը հանդիսացաւ ազգային եւ յեղափոխական երգերու սոյն երեկոն:

Ապրիլն Փարամագ մասնաճիւղի մեր ընկերները եւ պրաւօ՝ երգիչներ Մամուէլ Վարդանեանին

եւ Հրաչ Պողարեանին, իրենց հրաշալի կատարումներուն համար:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

Յիշատակելի եւ գնահատելի ձեռնարկ մըն էր այս մէկը, միւս նախաձեռնութեանց կարգին, կազմակերպութեամբ Ս.Դ.Շ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի, եւ ներկայութեամբ կեդրոնական վարչութեան ատենապետին եւ քարտուղարին, Ընկերներ Սեդրակ Աճէմեանին եւ Գրիգոր Խոտանեանին:

Կուսակցութեան 120-ամեակի ծիրէն ներս կազմակերպուած սոյն մեծարանքի երեկոն անգամ մը եւս կու գայ փաստելու որ յանձնառու կեանքը, զոհաբերութեան ոգին, եւ անձնուէր ծառայութիւնը ի վերջոյ կ'արժանանան գնահատանքի, անկախ այն իրողութեանէն որ մեծարանքի արժանացողները այդ բոլորը կը կատարեն եւ կը շարունակեն կատարել առանց ակնկալութեան, անձնուիրաբար եւ գիտակցօրէն:

Մեծարանքի սոյն ձեռնարկը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 26ի Ուրբաթ երեկոյան Փաստինայի Հ.Մ.Մ.ի կեդրոնէն ներս, ի ներկայութեան ընկեր-ընկերուհիներու եւ շարժող ընկերներու ընտանեկան պարագաներուն եւ համակիր շրջանակի մը:

Օրուայ հանդիսավարն էր Ընկ. Թովմաս Եթերեան, որուն կ'արժէ իրապէս շնորհակալ ըլլալ իր բացառիկ հանդիսավարութեան համար: Ընկ. Եթերեանի բացման խօսքը յատկապէս կը վերաբերէր հաւատաւոր կուսակցականի մը անձնագոհ եւ անհաշիւ վերաբերմունքին, հանդէպ իր կուսակցութեան, եւ անոր միջոցաւ, իր պատկանած ժողովուրդին եւ Հայրենիքին: Ընկերը յաջողեցաւ երեկոն հուսաւորել իր հաճելի մթնոլորտին մէջ, իր ջերմ, համոզիչ եւ հաւատաւոր խօսքերով, եւ ընթացք տուաւ յայտագրին:

Առաջին առիթով յոտնկայս ունկնդրուեցան Հայաստանի Հանրապետութեան եւ Հնչակեան կուսակցութեան քայլերգները: Երեկոն ունէր գեղարուեստական յայտագիր մը, ամուռնքող Ընկ. Ստեփան Յովակիմեան, որ ներշնչումով մատուցեց Պարոյր Սեւակի «Մարդկայ, Մարդ էլ կայ» բանաստեղծութիւնը, եւ համակրելի եւ հանրածանօթ երգչուհի՝ Անահիտ Ներսիսեանի հրաշալի կատարումը հայրենասիրական գոյգ երգերու, դաշնակի ընկերակցութեամբ Լեւոն Աբ-

րահամեանի: Չոյգ կատարումները ընդունուեցան խանդավառ ծափահարութիւններով:

Օրուայ խորհուրդի մասին իւրայատուկ ելոյթ մը ունեցաւ կեդրոնական վարչութեան քարտուղար Ընկ. Գրիգոր Խոտանեան, ընդհանուր կերպով անդրադառնալով մեծարուող ընկերներու իւրաքանչիւրին մատուցած ծառայութեան եւ ներդրումին, յօգուտ մեր կուսակցութեան եւ հայ ժողովուրդին: Յարգելի ընկերոջ ելոյթի մանրամասնութիւնները տրուեցան ձեռնարկի յատուկ թղթակցութեան մէջ: Նաեւ Ընկ. Սեդրակ Աճէմեանի խօսքը շնորհաւորանքի եւ գնահատանքի տեղի ունեցաւ իւրաքանչիւր մեծարուող կենսագրականի ընթերցումէն ետք, աշխատանք որ ընկ. Թովմաս Եթերեան բժախնդրութեամբ կատարեց:

Այսպէս, յետ մահու պատուոյ գիրքի յանձնուեցան ընկերներ Գրիգոր Լաչինեանի, Գրիգոր Գոնտուրալեանի եւ Գէորգ Սամուէլեանի: Մեզմէ առյաւէտ բաժնուած ընկերներու ընտանեկան անդամներէն մէկը ստացաւ պատուոյ գիրքը:

Ապա, հերթով կարդացուեան հակիրճ կենսագրական գիծերը հետեւեալ ընկերներուն, Գաբրիէլ Մորոյեան, Տօքթ. Արշակ Գազանճեան, Կարապետ Եղազեան, Տօքթ. Յարութիւն Սաղրեան, Հէրի Տիրամէրեան եւ Էօթէնի Պարտումեան: Պատուոյ գիրքերու յանձնումը յատկանշուեցաւ իւրաքանչիւր ստացողի իւրայատուկ եւ հետաքրքրական «սրտի խօսքով» որով ան կու գար իր սեփական մօտեցումը դրսեւորելու իր ծառայութեան երկար տարիներուն:

Յետմահու պատուոյ գիրքերը ստացան, ընկ. Գրիգոր Լաչինեանի համար՝ ընկ. Յովիկ Լաչինեան, ընկ. Գրիգոր Գոնտուրալեանի համար՝ իր դուստրը, եւ ընկ. Գէորգ Սամուէլեանի համար՝ ընկ. կարօ Պէքարեան: Միւս ընկերներու ելոյթները յատկանշուած էին հաւատքով, համոզումով եւ անկեղծութեամբ լեցուած խօսքերով, որոնք կու գային հաստատելու իրենց յանձնառութիւնը՝ հանդէպ իրենց կուսակցութեան, անոր գաղափարախօսութեան եւ անոր գոյատեւման:

Երեկոյ պիտի փակուէր «Տուր Ձեռքը Ընկեր» Հնչակեան Մարթերի կատարումով, որուն շարժողոյցին ընկերային ժամ եւ ճոխ հիւրասիրութիւն:

Անկեղծ, եւ հպարտառիթ երեկոյ մըն էր, որուն նմանները քիչ կը պատահին...

1975-2008 33th ANNIVERSARY Life, Health, Group Health Disability, Long Term Care NEW YORK LIFE

ԱՊԱԲՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԲՐԱԺԵՇՏ Է ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱԲՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՂ ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ 818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



Ս.Դ.Շ.Կ. 120-ԱՄԵԱԿ

ՎԱՍՏԱԿԱԽՈՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Ստորև կու տանք Ս.Դ.Շ.Կ.-ի 120-ամեակին առիթով մասնաւոր գնահատանքի արժանացած եւ պատուոյ գիր ստացած Հնչակեան ընկերներու կենսագրական ամփոփ գիծերը:

ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Տօքթ. Արշակ Գագանեան ատամնարու ժական ֆակուլտետէն շրջանաւարտ ու միջազգային ատամնարու ժական Implantology-ի Միութեան հիմնադիր անդամներէն, եղած է նոր Սերունդ Մշակութային Միութեան, ինչպէս նաեւ «Արարատ Գրական» ամսաթերթի հիմնադիր եւ խմբագիր անդամներէն մին: Իրրեւ ուսուցիչ պաշտօնավարած է Սահական երկրորդական, նոր Բարձրագոյն եւ Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարաններու մէջ:

Տօքթ. Գագանեան երկար տարիներ նախագահած է համասփիւռեան Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան, որ հիմնադիր քարտադրական հաստատութիւնն է Սահակեան-Լեւոն Մկրտիչեան երկրորդական վարժարանի համալիրին: Լիբանանի Բաղադարական պատերազմի շրջանին, ան շրջած է Միջին Արեւելէն՝ Երուսա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ եւ Գանատա՝ հանգանակութեան առաջնութեամբ, նիւթապէս սատար հանդիսանալու համար Սահակեան-Մկրտիչեան երկրորդական վարժարանի նիւթական անցուկ վիճակի քարելուման:

Տօքթ. Գագանեան աւելի քան երեք տասնամեակ մաս կազմած է Ա.Գ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ու վարած է անոր ատենադպիրի պատասխանատու պաշտօնը: Լիբանանի Քաղաքացիական պատերազմի ընթացքին մաս կազմած է Լիբանանահայութեան Վերականգնումի Կեդրոնական Մարմինն, Անթիլիաս:

Զուգահեռաբար իր հասարակական գործունէութեան՝ Տօքթ. Գագանեանն իրրեւ հրապարակագիր, գրող, աշխատակցած է հայ մամուլին, ստորագրելով բազմաթիւ յօդուածներ, պատմուածքներ, գրախօսականներ, սլաֆներ: Իրրեւ գեղարուեստական գրող, հեղինակ է երեք հատորներու. «Կեանքի Համար», 1966, «Անկարելի երագ», 1969, եւ «Մերին Ամերիկան», 1984:

1987էն ասդին հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ ուր ստանձնած է Արեւմտեան Շրջանի Հնչակեան Կուսակցութեան օրկան՝ «Մասիս» Շարքաթերթի պատասխանատու խմբագրի պաշտօնը: Ան արժանացած է քաղաքի պատուոյ գիրքերու:

1975ին ամուսնացած է Վարդուհի Գալէնտէրեանի հետ: Հայր է երկու զաւակներու, Տօքթ. Յուլի եւ Նարեկ Գագանեաններ:

Առ ի գնահատանք իր ունեցած հասարակական, հրապարակագրական, գրական, կրթական ու քարտադրական լայն գործունէութեան՝ Ամենայն Հայոց Վեհափառ Գարեգին Բ. զինպարգեւատրած է Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Բարձր շխնչանով, 4 Դեկտեմբերի 2005ին:

ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ

Ուսանած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանք եւ ապա հետեւած է Պէյրութի Ֆրանսական Համալսարանի հայագիտական դասընթացներուն:

Հիմնադիր անդամներէն է նոր Սերունդ Մշակութային Միութեան, որուն վարչութեան շարունակական անդամ եւ ատենապետ եղած է աւելի քան 30 տարի:

Մաս կազմած է «Արարատ» օրաթերթի եւ «Արարատ Գրական» խմբագրութեան: Գլխաւորած է Հնչակեան եւ Լիբանանահայ պատուիրականութիւնները միջազգային երիտասարդական փառատօներու:

25 տարի պաշտօնավարած է Դամասկոս Ա. Թարգմանչաց եւ ապա Պէյրութի Ազգային Սահակ-Մեսրոպեան վարժարանին մէջ որպէս ուսուցիչ եւ փոխ-տնօրէն:

1977ին Գալիֆորնիոյ մէջ հիմնադիրներէն է եւ առաջին ատենապետը՝ Արեւմտեան Ամերիկայի Հնչակեան Կուսակցութեան: Նոյն տարին հիմնադիրներէն է Գալիֆորնիոյ նոր Սերունդ Մշակութային Միութեան:

«Մասիս» Շարքաթերթի հիմնադրութենէն ի վեր մաս կը կազմէ անոր խմբագրական Մարմինն:

Փաստիկայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Յովսէփեան Ազգային Վարժարանի Հիմնադիր անդամներէն է եւ 22 տարի ծառայած է որպէս հոգաբարձու:

Ներկայիս ատենապետն է Ա.Գ.Շ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինն:

Ան 2005 թուականին արժանացած է Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի Սուրբ Ներսէս Շնորհալի շխնչանին:

ԷՕԺԵՆԻ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Ծնած է Հալէպ 1936ին: Նախակրթութիւնը ստացած է Կիլիկեան Վարժարանին մէջ: Ապա յանախած է Ամերիկեան Գոլէն եւ ապա Պէյրութի Լիբանանեան Գոլէն: Շրջան մը որպէս ուսուցչուհի պաշտօնավարած է Ֆրանսիսէն Գոյրերու վարժարանին մէջ:

Ան կանուխէն մուտք գործած է Ա.Գ. Հնչակեան Կուսակցութեան եւ Հ.Մ.Մ.ի շարքերը:

Մասնակցած է նոր Սերունդ Մշակութային Միութեան Հիմնադիրներու Հալէպի Վարչութեան:

Եղած է Հ.Մ.Մ.ի Վարչութեան անդամ, Օրիորդաց եւ Կանանց Միութիւններու ղեկավար, նոր Գիւղի Կիլիկեան վարժարանի հոգաբարձութեան ատենապետուհի, Կիլիկեան Ճեմարանի հոգաբարձու եւ Կիլիկեան Կանանց Միութեան վարչական:

Հ.Մ.Մ.ի 70-ամեակին առիթով ան վարձատրուած է վարչութեան շխնչանով: Իսկ Ամերիկա մեկնելէ առաջ՝ Կիլիկեան Ճեմարանի հոգաբարձութիւնը զինպարգեւատրած է Ռակի մետալով:

Հալէպահայի գական սեռի ծանօթ դէմքերէն է եւ քոլորանուէր գոհաբերութեամբ ծառայած իր պատկանած կազմակերպութեան, ազգին ու Հայրենիին:

ԿԱՐԱՊԵՏ ԵԱՐԱՋԵԱՆ

Ծնած է Հալէպ 1923ին: Յանախած է Կիլիկեան վարժարանը, ապա Միսիսիսեան Գոլէն:

Ամուսնացած է Իւդաքեր Թիւմայեանի հետ: Բախտաւորուած են երկու մանչ զաւակներով՝ Ռուբէն եւ Յարութիւն, որոնք ներկայիս որպէս բժիշկ կը գործեն Հարաւային Գալիֆորնիոյ մէջ, միաժամանակ կը վարեն ազգանուէր ծառայութիւններ:

Ան կանուխէն մտած է Հալէպահայ գաղութի ազգային հասարակական կեանքէն ներս: Աշխոյժ գործունէութիւն ունեցած է նաեւ որպէս պարզ շարքային Հնչակեան եւ ապա ձեռնհասօրէն վարած է Վարիչ Մարմնի ատենապետի պաշտօնը:

Երկար տարիներ վարած է Կիլիկեան Շրջանաւարտից Միութիւնը: Անդամակցած է նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ Հ.Մ.Մ.ին: Անդամ եւ ատենապետ եղած է Կիլիկեան Վարժարանի հոգաբարձութեան:

Եղած է անդամ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ արժանացած «Վեթերան Անդամ»ի կոչումին:

Հ.Մ.Մ.ի 70-ամեակին առթիւ հոչակուած է այս Միութեան «Վեթերան» անդամ:

1987ին, Հնչակեան Կուսակցութեան 100-ամեակին առթիւ ստացած է «Տիպար Վեթերան»ի պատուոյ գիր, որպէս առհաւատչեայ իր ուխտին հաւատարիմ շարքային Հնչակեանի, որ 45 երկար տարիներ մնացած է պատնէշի վրայ, հետեւողական ու բծախնդիր պարտանանաչութեամբ եւ նուիրումով:

Արժանացած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Վազգէն Ա.ի Հայրապետական Օրհնութեան գիրին:

ՇԵՐԻ ՏԻՐԱՍԵՐԵԱՆ

Ծնած է Պէյրութ 1942ին: Շրջանաւարտ է տեղւոյն Ազգային Ռուբինեան վարժարանէն: 1963ին աւարտած է Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը:

Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.Մ.ի եւ հիմնադիրներէն է Հ.Մ.Մ. «Փոքր Հայր» ֆութպոլի խումբին:

Պաշտօնավարած է նոր Բարձրագոյն Վարժարանին եւ Եունեսքոյի մէջ: Սիրած է նաեւ Հայ մշակոյթն ու թատրոնը եւ բեմադրած է կարգ մը բատերակական բիեսներ:

1967ին Ամերիկա փոխադրուելով հաստատուած է Բրոքլին Եսի մէջ եւ 2 տարի հետեւած է ֆիլմարտադրութեան դասընթացներուն: Օժանդակած է կարգ մը հայկական ֆիլմերու արտադրութեան գործին:

1970ին կը հաստատուի Գալիֆորնիա եւ կ'անդամակցի Ա.Գ. Հնչակեան Կուսակցութեան:

Վարած է Արեւմտեան Ամերիկայի Ա.Գ.Շ.Կ.ի Վարիչ Մարմնի ատենապետութիւնը: Իր օրով կուսակցութիւնն ունեցած է իր սեփական կեդրոնն ու օրկանը՝ Մասիս Շարքաթերթը:

Իր օրով տեղի ունեցած են միջ-կուսակցական ձեռնարկներ եւ մասնակցութիւն համահայկական ողիմպիական խաղերուն:

Հէրի Տիրամէրեան նիւթապէս եւ քարոյապէս սատարած է հայ երգի ու մշակոյթի տարածման գործին:

Մասնակցած է կուսակցութեան պատգամաւորական ժողովորեն-

ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ

Ծնած է Պէյրութ, Լիբանան, 1929 Ապրիլ 1ին: Նախնական ուսումը ստացած է Քարանթինայի Մեսրոպեան վարժարանը, էշրէֆիէի Ա. Գրիգոր Լուսաւորիչ նեմարանը եւ Աւետարանական «Հայ Միւլ»ը:

Ուսումնական կարն դադարէ մը ետք, կ'ընդունուի Պէյրութի Ամերիկեան համալսարանը, ուր կ'ընկերակցուի Պաակաւոր Արուեստից վկայականը 1952ին, իսկ Բժշկական վկայականը՝ 1956ին:

1956 թուականէն 1960՝ կը պաշտօնավարէ Հայ Ազգային Բուժարանէն ներս, մասնագիտանալով կրծքային հիւանդութեանց մէջ:

1975-1977 բժշկագործելով հանդերձ, կրկին կ'արձանագրուի Պէյրութի Ամերիկեան համալսարանը, այս անգամ հետեւելով փիլիսոփայութեան, գոր կ'աւարտէ 1977 թուին՝ «Մագիստրոս Արուեստից» վկայականով:

Իրրեւ բժիշկ՝ հանդիսացած է հիմնադիր անդամ Լիբանանի Հայ Բժիշկներու Միութեան, եւ մօտ 20 տարիներ վարած անոր ատենադպիրի պաշտօնը:

Գրական-հրապարակագրական մարզէն ներս, եղած է «Սփիւռք» շարքաթերթի խմբագրական կազմի ատենապետ՝ 1958էն 1964 թուականներուն, եւ թերթին աշխատակցած քաղմատեսակ յօդուածներով, բժշկական, ընկերային, հոգեբանական, եւ այլն:

Աշխատակցած է «Բժիշկ» ամսագրին եւ «Արարատ» օրաթերթին:

Հրապարակած է երեք գիրքեր: «Մինչեւ Բժշկին Ժամանու մը», Պէյրութ, Լիբանան:

«Բարոյագիտական Հարցեր Բժշկութեան մէջ», Պէյրութ, Լիբանան:

«Փիլիսոփայութեան Հիմնական Սկզբունքները» 1993 Լոս Անջելոս:

Թատերական գետնի վրայ, եղած է հիմնադիր անդամ Պէյրութի «Վարդան Անեմեան»ի անուան թատերախմբին:

Պաշտօնավարած է Սահակեան-Լ. Մկրտիչեան Լիսէէն ներս, որպէս անգլերէնի եւ ընդհանուր մշակոյթի ուսուցիչ:

1980 թուականին կը փոխադրուի Ամերիկա, Լոս Անջելոս քաղաք, ուր անհրաժեշտ բժշկական պետական ֆունկցիաները անցնելէ ետք, կը պաշտօնավարէ ամերիկեան բժշկա-առողջապահական ընկերութեան մը մէջ: Նոյն տեւն կը հետեւի հիւանդանոցային վարչագիտութեան դասընթացներուն եւ 1984 թուականին կը ստանայ «Մագիստրոս Առողջապահական Վարչագիտութեան» վկայականը: 1985էն ասդին, որպէս դասախօս, կը պաշտօնավարէ Լա Վրոն համալսարանէն ներս, հիւանդանոցային վարչագիտութեան, եւ բժշկական քարոյագիտութեան նիւթերը: Ունի փրոֆէսորի աստիճան:

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

«ԱՅԱՍՏԱՆ» ԸՆԹԱՆՈՒՅԿԱԿԱՆ ԸՆԹԱՆՈՒՅԿԱԿԱՆ ԸՆԹԱՆՈՒՅԿԱԿԱՆ 10ՐԴ ԱՄԵՆԱՄԵԱՅ ԸՆԹԱՆՈՒՅԿԱԿԱՆ ԱՐԱՐԱԹՈՆԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՆՈՅԵՄԲԵՐ 22ԻՆ

«Հայաստան» հիմնադրամի 10-րդ հեռուստամրաթիվը տեղի կ'ունենայ 2007 թ. Նոյեմբերի 22ին՝ Գոհաբանութեան օրը, առաւօտեան ժամը 8:00ից մինչեւ երեկոյեան ժամը 8:00ը: Այս տարի եւս ԱՄՆ-ում եւ աշխարհի շուրջ բնակող միլիոնավոր ընտանիքներ կը կարողանան դիտել հեռուստամրաթիվը արբանեակային եւ կաբելային կապի միջոցով: 12 ժամեայ ուղիղ հեռարձակմամբ այս ծրագիրը կ'ընթանայ նաեւ ինտերնետով՝ <http://www.armeniafund.org/> կայքէջի վրայ:

Գոհաբանութեան օրուայ աւանդույթ դարձած Հայաստանի Հիմնադրամի հեռուստամրաթիվը, մէկ անգամ եւս կը համախմբի աշխարհասփիւռ հայութեանը մի նպատակի շուրջ՝ աջակցել հայրենիքին առաւել ամրապնդուելու: Վիթխարի աշխատանք պահանջող այս հեռուստատեսային ծրագիրը 50 մասնագէտների ու 200 կամաւորների ջանքերի արդիւնք է:

Այս տարի առաջին անգամ Հեռուստամրաթիվը կը հեռարձակուի ԱՄՆ Հանրային հեռուստատեսութեան (PBS) Լոս Անճելոսի մասնաճիւղ Հոլիվուդում գտնուող KCET ստուդիայից: Հարաւային Գալիֆորնիայում հաղորդումը ուղիղ էթերով կը հեռարձակուի KSCI-LA 18 ալիքով՝ ընդգրկելով Լոս Անճելոսի բոլոր արտարձանները: KCET ստուդիան հեռուստամրաթիվները անցկացման տասնամեակների փորձ ունի, այստեղ են տեղի ունենում ձերի Լուիսի MDA հեռուստա-

մարաթիվը, Chabad հեռուստամարաթիվը եւ բուն ԱՄՆ Հանրային հեռուստատեսութեան տարբեր մարաթիվներ: Ստուդիան շահույթ չհետապնդող կազմակերպութիւն է, որն օժտուած գերարդիական տեխնոլոգիայով եւ ունի հնարաւորութիւն արտադրելու ծրագրեր High Definition ֆորմատով:

Հեռուստամրաթիվին ներկայ կը գտնուեն Հայաստանից ու Արցախից ժամանած մի շարք յատուկ հիւրեր: Արցախի նորընթաց նախագահ Բակո Սահակեանն ու ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանեանը կը մասնակցեն ուղիղ էթերով:

Հեռուստամրաթիվի ընթացքում կը ներկայացուեն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի գիւղական համայնքներում տիրող վիճակն ու առկայ խնդիրները: Ստացուած նուիրատուութիւնները կ'ուղղուեն Հիմնադրամի Գիւղական զարգացման ծրագրին, որը նպատակ ունի սատարելու Հայաստանի Տաւուշի շրջանի եւ Ղարաբաղի Մարտունու շրջանի գիւղական համայնքներին: Կայուն զարգացում ու գիւղացիների համար եկամուտ ապահովելու համար ենթակառուցումները զարգացման բազմակողմանի այս ծրագիրը նաեւ տնտեսական տարր կ'ընդգրկի: Գիւղական զարգացման ծրագիրը կը համակարգուի ԱՄՆ կառավարութեան «Հազարամեակների մարտահրաւէրներ» կորպորացիայի, Համաշխարհային բանակի եւ ՄԱԿի զարգացման գրասենյակի ծրագրերի հետ:

«Լարք» երաժշտական ընկերակցութիւնը ԸՆԹԱՆՈՒՅԿԱԿԱՆ ԸՆԹԱՆՈՒՅԿԱԿԱՆ ԸՆԹԱՆՈՒՅԿԱԿԱՆ

Յարգելի հայրենակից, սիրելի հայ ժողովուրդ, Բոլոր ժամանակներում մեզ յուզել են ազգային հրատապ հարցերը՝ պատմական, քաղաքական, մշակութային եւ այլ բնույթների: Մեր երկիրն ու ժողովուրդը յաճախ է ունեցել եւ ունի անցումային շրջաններ, որ կապուած են թէ՛ իր ներքին եւ թէ՛ արտաքին աշխարհի փոփոխութիւնների հետ:

«Լարք» երաժշտական ընկերակցութիւնը, որպէս մշակութային հաստատութիւն, մտորում է մի հարցի շուրջ. ի՞նչ ճակատագիր պիտի ունենայ այն գիրն ու գրականութիւնը, որ գտնուում է անհատների մօտ, որ մէկիկ-մէկիկ հաւաքել են այդ գրքերը եւ կազմել են իրենց գրադարանները: Նրանք ապրում են այստեղ, եկել են հիմնականում Մերձաւոր Արեւելքից, Պարսկաստանից, Արեւելեան Եւրոպայից, Հայաստանից եւ այլ երկրներից: Կատարուում է սերնդափոխութիւն:

ԳԵՐԱՇՆՈՐԸ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵԱԿԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼԵԱՆ Կ'ԱՅՅԵԼԵ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՍԸ ՊԻՏԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԻ ԻՐ ԾՆՆԴԵԱՆ 70ԱՄԵԱԿԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Աւագ Միաբաններէն՝ Գերշ. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պողոպալեան հիւրաբար պիտի այցելէ Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմը: Սրբազան Հայրը Լոս Անճելոս պիտի ժամանէ Նոյեմբեր 8ին, 2007:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հրաւէրով, բարձրաստիճան հիւր հոգեւորականը Սուրբ Պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ հետեւեալ եկեղեցիներուն մէջ:

Կիրակի, Նոյեմբեր 11ին Եղեմի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցի:

Կիրակի, Նոյեմբեր 18ին Ֆրէյնոյի Սուրբ Պողոս Հայց. Եկեղեցի:

Կիրակի, Նոյեմբեր 25ին Վէն Նայրի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցի:

Գերշ. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պողոպալեան ծնած է Սուրիա 1937ին, Աբեղայ ձեռնադրուած է 1961ին եւ Եպիսկոպոս Օծուած է 1974ին՝ ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Մայր Աթոռէն ներս վարած է գանազան պաշտօններ: Եղած է նաեւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ: Երկար տարիներ ծառայած է որպէս Առաջնորդը Հայոց Մեծն Բրիտանիոյ Թեմին:

ԳԵՐՇ. Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ԳՈԶԱՊԱԼԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 70ԱՄԵԱԿ Յուլիս 10ին, 2007 Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածնի Վեհարանի հանդիսութիւններու դահլիճին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահութեամբ եւ արժանավայել կերպով նշուեցաւ Սրբազան Հօր ծննդեան 70ամեակը: Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ ըսած է. «Իր հոգեւոր ծառայութեամբ Ներսէս Սրբազանն ու իր նմանները խորհրդային հասարակարգի ժամանակ վառ պահեցին կանթեղը Սուրբ Էջմիածնի: Մշտաշունչ եղաւ աղօթքը Սուրբ Էջմիածնի կամարներուն ներքեւ եւ իրենց շնորհիւ նաեւ կենսունակ մնաց Եկեղեցին»:

Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ, «Հայորդեաց» Երգչախումբ-Պարախումբի ելուցով ձեռնարկի ընթացքին, պաշտօնապէս պիտի նշուի նաեւ Գերշ. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պողոպալեանի ծննդեան 70ամեակը: Սրբազան Հօր կողմէ յատուկ յանձնարարութեամբ մը նշանակուած է Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեանի գլխավորութեամբ, որպէսզի ներկայացուի արժանավայել յայտարար մը եւ պատուի արժանանայ բարձրաստիճան հիւր հոգեւորականը, որ երկար տարիներու բեղուն վաստակ ունի Հայց. Եկեղեցւոյ իր ծառայութիւններուն շնորհիւ:

Գիտութեան նուաճումները, համակարգչային աշխարհը հեռացնում են մեզանից գրքերը եւ հայ գրքի ճակատագիրը դառնում է անորոշ: Զգիտենք, թէ ի՞նչ պատասխանատուութեան զգացում կ'ունենայ դրանց հանդէպ յաջորդ սերունդը եւ կամ կ'ունենա՞յ հնարաւորութիւն այն պահպանելու:

Ընկերակցութիւնը ունի գրադարան-մատենադարանի ծրագիր, որի իրագործումը հնարաւորութիւն պիտի տայ մշակութասէր հասարակութեանը այդ կենտրոնում հաւաքուելու, հանդիպելու, պրպտելու եւ քննարկելու մեզ հետաքրքրող հարցերը: Ապագայ գրադարանը արդէն ունի մի քանի հազար անուն գրականութիւն հետեւեալ նուիրատուներից. Շաւարշ Մանուկեան, Անգինէ Մուրատեան, Ստիվն Գրիմ, Մարի Էթեան, Վարդան եւ Հիլտա Մնակեան, Ռոզին Մուրադեան, Վարդերես Գարակէօզեան եւ ստանալու է Արամ Պուլլուրճեանի հաւաքածոն: Հաստատութիւնը պատրաստ է ընդունել գիր ու գրականութիւն, մշակութային վաւերագրութիւններ, արխիւային փաստաթղթեր այն անձերից, որոնք ցանականում են իրենց ունեցուածքը գետեղել մի տեղ, ուր կարող են բաժնեկցել հանրութեան հետ:

Վերցնելով իր վրայ բարոյական եւ նիւթական նոր պարտաւորութիւններ «Լարք» երաժշտական ընկերակցութիւնը ողջունում է ծրագրի քաջալերողներին եւ շարունակում է իր առաքելութիւնը:

ՇԱՅ ԴՊՐՈՑ

- Field Trips Including To University Visits At Each Grade Level, Junior Trip Armenia

AGBU High School-Pasadena offers a high quality, rigorous, challenging and college preparatory curriculum geared to prepare students for the university within a school culture that strives to encourage, inspire and nurture all aspects of student development.

To receive a registration packet or for more information please

Call: (626) 794-0363

We are located at 2495 E. Mountain St, Pasadena, CA 91104

(corner of Mountain and Altadena)

*Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸԱՅԱՋԻՆՋ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԸԱՄԱՇԽԱՐԸԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՓՐՈՖ. ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱՋԵԱՆ

1908 թ. Յուլիսին Օսմանեան կայսրութիւնում երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ հայ ժողովուրդը այն հաւատքն ունէր, որ սահմանադրութեան վերահաստատումով կ'ապահովուին մարդկային տարրական իրաւունքները, կեանքի, պատուի եւ ունեցուածքի անձեռնմխելիութիւնը:

Հաւատեսութեամբ ընդունելով սահմանադրութեան հռչակումը, շատերը միամտաբար կարծում էին, որ այն կեանքի կոչելով կրկին տէր կը դառնան Ապտուլ Համիտի ժամանակաշրջանում իրենցից բռնի խլուած հողերին, քանի որ իրենց ձեռքում գտնուում էին պաշտօնական կալուածագրերը: Մինչդեռ շատ շուտով պարտուեց, որ հակառակ հրապարակուած հրամանագրերին թուրք պաշտօնական անձինք բոլորովին անտարբեր էին մնում այդ բոլորի նկատմամբ:

Դժբախտաբար հայերի խանդավարութիւնը այդ ուղղութեամբ շատ կարճ տեւեց: Ատանայում եւ Կիլիկիայի մի շարք վայրերում տեղի ունեցած հայերի կոտորածը կրկին բացեց ժողովրդի սրտում խորացած Ապտուլ Համիտեան շրջանի արիւնահեղութեան ծանր վէրքերը:

Փաստերն անհերքելիօրէն վկայում են, որ Ատանայի նահանգում կազմակերպուած ջարդերը նախօրօք նախապատրաստուած եւ հրահրուած են երիտթուրքերի կուսակցութեան կողմից, որ հայերը ոչ մի մեղք չունէին եւ հայկական ապստամբութեան մասին նրանց յորինած հեքիաթը լոկ պատրանք էր: Ապրիլեան այդ կոտորածների ընթացքում հայերը կորցրին 30 հազար մարդ:

Այո՛, տապալուեց արիւնոտ բռնակալը, բայց նրա հայաջինջ քաղաքականութիւնը սկսուեց աւելի հետեւողական եւ վայրագորէն գործադրուել «Իթթիհատ վէթերաքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան պարագլուխների գործադրած ջանքերով:

Շատ կարճ ժամանակից յետոյ յայտնի դարձաւ, որ գաւառներում կրկին տեղի են ունենում վայրագ սպանութիւններ, բռնաբարութիւններ, ունեցուածքի յափշտակութիւններ, իսկ յանցագործները մնում էին անպատիժ: Հասկանալի է, որ հայկական հալածանքների հիմնական դրդապատճառը տուեալ ժամանակ կապուած էր հայկական հարցի աշխուժացման հետ, քանի որ հայաբնակ 6 նահանգներում (Էրզրում, Վան,

Պիթլիս, Տիարպէքիր, Սվազ, Խարբերդ) բարեփոխումներ անցկացնելու նպատակով բանակցութիւններ էին տեղի ունենում մեծ տէրութիւնների շրջանակում: Չնայած այն ի վերջոյ ստորագրուեց թուրքական կառավարութեան կողմից (Յունուար 26, 1914 թ.), սակայն հենց սկզբից թուրքերը դէմ էին դրսից պարտադրուող բարենորոգումներին եւ հսկողութեանը: Յետագայում Առաջին Համաշխարհային Պատերազմի մէջ մտնելուց յետոյ, Թալեաթը, ձեռնարկ եւ միւս պարագլուխները բացառապէս յայտարարում էին այն, որ իրենք մտան պատերազմի մէջ, որպէսզի ազատուեն իրենց վզին փաթաթուած նման պարտադրանքներից:

Ելնելով հայերի օրհասական ծանր վիճակից Կ. Պոլսի հայ պատրիարքութիւնը բազմիցս բանաւոր եւ գրաւոր բողոքագրեր է չղել Բարձրագոյն դրանը, որտեղ փաստացի տուեալներով յայտնուած է տեղի ունեցող անարդարութիւնների, չարաշահումների, կողոպուտի, բռնաբարութեան, սպանութիւնների եւ ընդհանրապէս հայերի դէմ նախապատրաստուող զանգուածային կոտորածի մասին:

Դեռեւս 1911 թ. Փետրուարի 14-ին Կ. Պոլսի հայ պատրիարքութիւնը պաշտօնապէս դիմում է ներկայացնում Թուրքիայի արդարադատութեան նախարարութիւն, նախագրուած շարքերով, որ հայաբնակ գաւառներում ծանր վիճակ է տեղի ունում: Տեղեկացուած է հայկական հալածանքների, սպանութիւնների, անօրէն գանձուող հարկերի եւ այլ չարաշահումների մասին:

Մատնանշուած է նաեւ, որ այդ բոլորի մասին Բարձրագոյն դրանը բազմիցս կատարուած բողոքարկումները մնում են թղթի վրայ եւ չեն ձեռնարկուում անհրաժեշտ միջոցներ յանցագործներին պատժելու եւ իրողութիւնը բարելաւելու ուղղութեամբ: Հետեւանք լինում է այն, որ հայերը ստիպուած լքում են իրենց հայրենիքը եւ ապաստան փնտռում արտասահմանում: Միւս կողմից՝ նրանց ունեցուածքին եւ հողերին տիրում են այլ տեղերից գաղթած թուրք մուհաճիրները:

Այստեղ հարկ ենք համարում նշելու նաեւ, որ 1911 թ. Նոյեմբերի 28-ին, Օսմանեան մէճլիսի պատգամաւորի իրաւունքից ելնելով Գրիգոր Զօհրապը մեծ վեցիր Սայիդ փաշային ներկայացնում է մի խնդրագիր, որտեղ անհերքելի փաստերի հիման վրայ բացառապէս տուած է կառավարութեան անբարեացակամ վերաբերմունքը, կամա-

յականութիւնն ու զեղծումները հայերի հանդէպ եւ Թուրքիայի հայաբնակ նահանգների ծանր դրութիւնը բարելաւելու եւ հողային հարցը լուծելու միտումներով առաջարկում է հաւանական թուացող միջոցառումներ:

Որպէսզի ընթերցողը աւելի պարզ պատկերացում ունենայ իրավիճակի մասին բերում ենք Գրիգոր Զօհրապի կազմած այդ խնդրագրից մի հատուած:

«Չնայած սահմանադրութեան հռչակումից անցել է չորս տարի, սակայն հայերով բնակեցուած վիլայէթներում բարեփոխման ոչ մի նշան չի երեւացել: Ընդհակառակը, վերջին երկու տարիներին հայերի վիճակը անտանելի է դարձել: Յիշեալ վիլայէթներում ունեցուածքի, պատուի եւ կեանքի ապահովութեան մասին խօսք անգամ լինել չի կարող, ջարդի սպառնալիքները բնակչութեանը պահում են մշտական սարսափի մթնոլորտում: Ստացուած տեղեկութիւններից պարզուած է, որ կան մարդիկ, որոնց ջանքերով բնակչութեան համար տեւական վտանգաւոր իրավիճակ է ստեղծուած: Ակնյայտ է, որ ամբողջապէս հայերով բնակեցուած այդ վիլայէթները կրկին նետուած են արեան յորձանուտը...»:

Գրիգոր Զօհրապի եւ այլոց ներդրած բոլոր ջանքերը ինչպէս նաեւ Պատրիարքութեան ձեռք առած միջոցառումները անցան ապարդիւն եւ հայերի վիճակը աստիճանաբար դարձաւ աւելի վտանգաւոր եւ օրհասական:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախաշեմին «Իթթիհատ վէթերաքի» կուսակցութեան ղեկավարները իրենց գաղտնի նիստերում երբ ընդունեցին հայերին բռնի տեղահանելու, կոտորելու եւ իսպառ ոչնչացնելու որոշումը, դա պատահական չէր, քանի որ նախորդ տարիներին արդէն նկատուում էին դրա պարզորոշ նշանները, ուղղակի սպասում էին յարմար ժամանակի: Եւ այդ յարմար ժամանակը՝ Համաշխարհային Պատերազմն էր:

Եւ սկսեցին կոտորել հայերին, այն էլ ինչպիսի բարբարոսական ձեւերով:

Արեւմտահայութիւնը ամենա-

դաժան հալածանքների եւ ֆիզիքական ոչնչացման ենթարկուեց յատկապէս Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարութեան գործադրած նենգ եւ անմարդկային քաղաքականութեան հետեւանքով:

Արեւմտահայութեան գանգուածային կոտորածների նախաշեմին տեղի ունեցած Կ. Պոլսի առաջին մահասարսուռ դէպքերի ժամանակակից Ա. Ալպոյաճեանը գրում է. «Առաջին ազդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսի բնակչութիւնը անակնկալի մը առջեւ կը դնէր, 1915 Ապրիլ 11 (24)ի ձերբակալութիւնները եղան: Մէկ գիշերուան մէջ Կ. Պոլսոյ մտաւորական դասակարգի ամէնէն կարկառուն դէմքերը եւ ժողովուրդին ամէն դասակարգերէն 250 հոգիի չափ անձեր, ձերբակալուեցան եւ Չանկըրը եւ Այաշ տարագրուեցան»:

Չանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ Փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչուում ռազմական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման հարցը նախօրօք մշակուած եւ որոշուած էր «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութիւնը իսպառ բնաջնջելու ճանապարհը: Եւ պատերազմը պատեհ առիթ հանդիսացաւ, որպէսզի նրանք ոչնչացնեն ոչ միայն հայերին, այլեւ հաշուեյարդար տեսնէին քրիստոնեայ միւս ժողովուրդների հետ:

«Ամէնուրեք սկսեցին հաւաքել հայերին, գրում է թուրք գործիչ Մեվլան Չատէ Ռիֆաթը, նոյնիսկ առանց հաշուի առնելու հիւանդներին, ծերերին ու երեխաներին: Նրանց, ովքեր ընդունում էին մահաճակատանութիւն, ժամանակաւորապէս դուրս էին հանում քարաւաններից, իսկ միւսներին

Շարք էջ 17

ԲԱՑՈՒԱԾ ԵՆ

**Հիպնոսաբուժութեան երկու կեդրոններ
ղեկավարութեամբ՝
Փորձառու բժիշկ Արթին Սադրեանի**

**Փասատինայի մէջ՝
Երեւնաբքի, Հինգշաբքի եւ Շաբաթ
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
Pasadena CA 91104**

**Կլէնտէյլի մէջ՝
Երկուշաբքի, Զորեւշաբքի եւ Ուրբաթ
Հասցէ՝ 450 North Brand Blvd. Suite 600
Glendale CA 91203
Հեռախօս (818) 434-8118
միայն ժամադրութեամբ
Առաւօտեան ժամը 10-էն, կ.ե. ժամը 3**

ՎԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹ

Փասատինայի մէջ փոքր խանութ մը վարձու է Washington պողոտայի վրայ: Հասցէն է՝ 1527 Washington Blvd, Pasadena: Մանրամասնութիւններու համար հեռաձայնել Աւուրին՝ (626) 794-5318 թիւին:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ «ԱՐՄԷՆ» ԿԱՐՃԱՄԵԹՐԱԺ ՇԱՐԺԱՆԿԱՐԸ

ԴՈՎՏ. ՄԻՆԱՍ ԳՈՅՃԱՆԱՆ

«Ինչ որ շատերն չեն գիտեր տակալից, ուրիշներ երբեք պիտի չմոռանան»:

Հայ նոր սերունդը եկած հասած է ու իր խօսքը կ'ուզէ լսեցնել ոչ միայն իւրայիններուն, այլ օտար հասարակութեան: Նորերը կը մտածեն սապէս՝ մենք գիտենք մեր հայրենիքի մասին, գիտենք որ աւելի քան երեքհարամեայ պատմութիւն ու մշակույթ ունեցող ազգ ենք, առաջին քրիստոնեաներն ենք, ունինք սեփական կատարեալ այբուբեն, խղճի ու ինքնութեան համար առաջին մարտիկներն ենք, 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը մեզի հետ պատահած է, եւայլն, բայց աշխարհը տեղեակ չէ կամ շատ քիչեր տեղեակ են: Մենք, կ'ըսեն անոնք, օտարներուն հետ իրենց լեզուով պէտք է խօսինք:



Այս մտածելակերպն ու մօտեցումը ես աւելի շատ կը նկատեմ շարժանկարով, փորձառական թատրոնով, անգլիագիր գրականութեամբ ու ժամանակակից երաժշտութեամբ զբաղողներու մէջ: System of a Down-ը աւելի մեծ գործ տեսաւ մեր դատի ծանօթացման մէջ քան մեր ու մեր նախորդներու տասնեակ ձեռնարկներ ու ցոյցեր:

Հապա ի՞նչ ըսենք այն հարիւր հազարաւոր ու միլիոնաւոր տղարի հասնող ներդրումներու եւ յատկացումներու մասին, որոնց արդիւնքը միշտ չէ որ արդարացուցած է մեր ակնկալութիւններն ու յոյսերը: Հարց կը ծագի նոր սերունդին ու իմ՝ «հին» սերունդէս շատերուն մօտ թէ՛ արդեօք աւելի քիչ յատկացումներով հնարաւոր չէ՞ր աւելի մեծ արդիւնք ստանալ:

Ահաւասիկ հերթական անգամ կրկին պատահականօրէն կը հանդիպիմ երիտասարդ արհեստավար-ժուհիի մը՝ CSUN-ի Քալիֆորնիոյ Նորթրիճի Նահանգային Համալսարանի շարժանկարի բաժանմունքէն Շերրի Ֆրաստըքճեանին, որուն աւարտական թեզ-շարժանկարը բարձր գնահատանքի արժանանալով դասախօսական կազմի կողմէ, ընտրուած է որպէս լաւագոյնը ներկայացուած 25 թեզերուն մէջ: Գրող, բեմադրիչ ու արտադրիչ Շերրի իր «Արմէն» կարճամետրաժ աշխատութեան համար շահած է մասնագիտական AR չափազանց թանկարժէք քամերա մը:

Հաճոյքով ու լարուած կը լսեմ Շերրիին, կը հարցուփորձեմ, կը փորձեմ մտնել իր ներաշխարհը, պրպտել իրմէ իմանալ այն շարժանկարները, որոնք գինք մղած են իւրովի ներկայացնելու անհասարակ ցեղասպանութեան նիւթը, արհեստավարժօրէն իր կիրառելի դարձնելու հարկականը: Կը դիտեմ վայրկեանուկէս տեւողութեամբ գեկուցանակարը (teaser trailer) կը կոմպոզիւմ որ գործ ունիմ ինքնատիպ մտածողութեան տէր երիտասարդ գրող-բեմադրիչ-արտադրիչի մը հետ, որուն 15 վայրկեաննոց

պատմը տակալին թուղթի վրայ արտակարգ հիացում պատճառած է իր ոչ-հայ գործընկերներուն:

Արմէնը, համանուն կարճամետրաժի գլխաւոր կերպարը, 1915ին վերապրող մըն է, կ'ապրի Գերմանիա, մասնագիտութեամբ ժամագործ է, պատասխանատուութիւն կը զգայ փրկելու իր հրեայ ծանօթ կնոջ որդին, եօթը տարեկան Բենիամինը Նացի ՍՍ-ականներու ձեռքէն: Արմէն կը դիմակայէ լուրջ դժուարութիւն մը, ան

պէտք է կատարէ շատ վտանգաւոր ընտրութիւն մը, որ կրնայ վնասել իրեն: Մէկ կողմէ նացի գինուորականը բազէի պէս կը հետեւի իր մէն մի շարժումներուն, միւս կողմէ 1915ի Ցեղասպանութեան արհաւիրքները կը հալածեն իր միտքը: Արմէն պէտք է դիմագրաւէ իր անցեալի ու ներկայի շարիքը, որ կը թարախտի իր ժամագործի համեստ խանութին շեմին:

Երբեմն մեր օտար բարեկամները մեզի կը յուշեն, յանուն մեր այսօրուան աւելի ուրախ տարիները ըմբռնելու, թէ մէկդի դնենք անցեալի տխուր փորձառութիւնները, նայինք ապագային ու վայելենք այն բախտաւոր օրերը, որոնք վիճակուած են մեզի: Որքան ալ մարդասիրական ըլլան նման խորհուրդները՝ քիչ մը թեթեւօտիկ կը հնչեն մեր ժողովուրդի բացարձակ մեծամասնութեան համար, որովհետեւ, կ'ըսէ Շերրի. «Ամէն հայ ընտանիք պատմութիւն մը ունի պատմելիք... Իմ մեծ մեծ մայրս ու հայրս կը պատկանին այն անմեղ մէկուկէս միլիոնին, որոնք կորսնցուցին իրենց կեանքը... Եւ գիտէ՞ք թէ ինչո՞ւ հայեր պիտի չզաղրին պատմել, որովհետեւ ոչ ոք լսեց զիրենք նախ եւ առաջ եւ ոչ ոքի հոգը եղաւ այդ շարիքը»:

Ահաւասիկ կարճամետրաժ ժապաւէն մը, որ անուղղակիօրէն, առանց խուժողութ տեսարաններ ցոյց տալու, նոր ոճով ու մեթոտով մակերես կը հանէ ամբողջ ողբերգութիւն մը, ՉԱՐԻՔ մը, ցեղասպանութիւն մը՝ գործուած ոչ միայն յատուկ ժողովուրդի մը հանդէպ, այլեւ մարդկութեան հանդէպ առհասարակ: Ու մարդիկ դաս չառին եղածէն, պետութիւններ չպատժուեցան իրենց արարքներուն համար, չդատապարտուեցան: Խնդրեմ, 1915ին հազիւ երեսուն տարի անցած, գրեթէ նոյն բարբարոսութեամբ վարուեցան հրեաներուն հետ, եւ անոնց վերապրողները բաներ ունին պատմելիք, պատմութիւններ ունին փոխանցելու:

Շերրի Ֆրաստըքճեան ոճիրներէն ամենէն ահաւորին կը մօտենայ որպէս ամբողջ մարդկութեան վե-

«ՐԱՅ ՖԵՍ» ԵՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

Հոկտեմբերի 4-14-ը բջջային հեռախօսներն անջատելու մասին յիշեցումները յաճախացել էին: Առիթն ուրախալի էր, եւ յիշեցումները վերաբերում էին միայն թատերասերներին: Այդ օրերին Երեւանում կայացաւ «Հայ Ֆեստ» 5-րդ միջազգային թատերական փառատօնը: Չնայած «Հայ Ֆեստ» 5-րդ միջազգային փառատօնն արդէն բոլորովին էլ թատերական չէր, այլ կատարողական արուեստների փառատօն էր, քանի որ «Հայ Ֆեստ» 5-րդ փառատօնում ներկայացուած էին ոչ միայն թատերական, այլ նաեւ պարային ու երաժշտական խմբեր: Հանդէս են եկել շուրջ 350 մասնակից՝ 33 երկրից, այդ թւում 40 կատարողական խումբ Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից, Շուեյցարիայից, Գերմանիայից, Աւստրիայից, Սան Մարինոյից, Հոլանդիայից, Լիտվայից, Սլովենիայից, Ղազախստանից, Վրաստանից, Սերբիայից, Քուպայից եւ այլ երկրներից: Հայաստանից մասնակցեցին 24-ից աւելի թատրոններ եւ թատերախմբեր: Ի դէպ, այս տարի թատերախմբեր կային ոչ միայն Երեւանից, այլ նաեւ Վանաձորից եւ Արտաշատից:

Փառատօնը բացուեց Նատալիա Կասպարովայի Պարային Միութիւն ներկայացումով (Սանկտ Պե-

տերբուրգ, Ռուսաստան): Ներկայացումը վերնագրուած էր «Կոմիտասի երգեր»:


Ներկայացումը իր ծննդավայրը կորցրած մարդու հոգեկան ծանր ապրումների մասին էր: Ի դէպ, հանդիսատեսը յուզուած էր ներկայացումից, յատկապէս, որովհետեւ «Կոմիտասի երաժշտութեան տակ պարողները ունենէին»:

Հենց սա էր լսում ծափահարութիւններից: Կար նաեւ հանդիսատես, ով գտնում էր, որ ներկայացումը կորստի անյոյս վշտով պիտի չաւարտէր: Ի հարկէ, զուլալ երաժշտութեան տակ հաճելի էր դիտել դերասանների մարմնի անթերի պլաստիկան:

Փառատօնի աւարտին էլ ցուցադրուեց պար: Պարը վերնագրուած էր «Սալամանդրայի երգեր» (Արթու Փրինթինգ Հաուզ, Վիլնյուս, Լիտվա): Ներկայացման համար ներշնչանքի աղբիւր է եղել սալամանդը (ռեժ. Լորետա Ջուդակայտե, խորեոգրաֆ՝ Վալենտինա Մասալոկիու):

Այդ, բացառիկ ներկայացումն անցաւ բացառիկ ու խորհրդաւոր լուսութեան մէջ, որը ընդհատուած էր բուռն, կարճ ու վախուրած

Շար.ք էջ 19



Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN

Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270



The Power of Blue.™

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are independent licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

Շար.ք էջ 19

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION


Բեղմնաւոր Անցեալ
Proud Past



Լուսաշող Ապագայ
Exciting Future



The Western Diocese of the Armenian Church of North America
The Armenian General Benevolent Union
Present



The Second
North American tour
of the award-winning
performing arts troupe of
the Nork Children's Center,
the "HAYORTATS".



One-of-a kind tour de force, coined as the
"Armenian Cirque Du Soleil"
Unparalleled talent, spirit and vitality,
the troupe of over 60 young and dynamic
performers will delight and entertain with a
mix of traditional Armenian and contemporary
art forms; song, dance, instrumental music,
dramatic recitation as well as skillful and thrilling gymnastics and aerobatics



"HAYORTATS"
PERFORMANCE SCHEDULE

LOS ANGELES

THURSDAY, NOVEMBER 15, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
STUDENT PERFORMANCE 4:00 PM, \$12.00

SATURDAY, NOVEMBER 17, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
8:00 PM, \$30.00 18 & YOUNGER \$15.00

FRIDAY, NOVEMBER 16, 2007
WESTERN DIOCESE ARMENIAN CHURCH
3325 N. GLENOAKS BLVD., BURBANK
8:00 PM, \$30.00 18 & YOUNGER \$15.00

SUNDAY, NOVEMBER 18, 2007
AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA
5:00 PM, \$30.00 18 & YOUNGER \$15.00

FOR INFORMATION & TICKETS
CONTACT THE AGBU OFFICES
626.794.7942
AGBU MANOOGIAN-DEMIRDJIAN SCHOOL
818.883.2428
ABRIL BOOKSTORE
818.243.4112
CHATERIAN VIDEO
818.242.6928

SAN FRANCISCO / BAY AREA

SUNDAY, NOVEMBER 25, 2007
BAYSIDE PERFORMING ARTS CENTER
2025 KEHOE AVENUE, SAN MATEO
4:00 PM
\$50.00 ADULTS \$25.00 STUDENTS

FOR TICKETS, CONTACT AGBUSV@YAHOO.COM OR

HAYGO SHAHBAZIAN
650.969.2616
ZVART SHAHBAZIAN
510.483.1347

SONA THOMASIAN
415.334.0317
RITA ZORIAN
408.243.0829

«ՀԱՅՈՐԴԱՅ»Ը ՍԱԳՆԻՍԱՅՈՒՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է շարունակվում է

դուրսից ներս: «Նորք»-ը իր յայտագրին մէջ ունէր «Ճկուն Մարմնամարզութիւն» եւ «Զուարճալի Օղակներ» երջթները: «Ասուպ ստեպլը» կը բովանդակէր «Մենամարտ»ը, «Պոպուլըրի» եւ «Սարգարայատ»ը, որոնք իրենց նօթագրական հարազատ արտայայտութիւնը կը գտնէին պարային իւրաքանչիւր խաղին մէջ: Իսկ, ինչ կը

վաթսուն երկսեռ դեռեւս մանկունակ եւ պատանեկութեան սեմին նոր թեւակոխող հայորդիներ գեղարուեստական վայելքի մթնոլորտ ստեղծեցին սրահէն ներս:

Իր բազմահամոյթներով՝ «ՀԱՅՈՐԴԱՅԸ»-ը գերազանցապէս նրբագործուած գեղարուեստատեղծագործական բեմադրութիւն մըն է մանկապատանեկան մակարդակի վրայ, որ արժանի է ամէն գօրակցութեան:



վերաբերի «Ճկուն Մարմնամարզութիւն» եւ «Զուարճալի Օղակներ», միջազգային չափանիշեր բաւարարելու կարող երջթներուն՝ անոնք կը ստեղծեն գերազանց շքեղութիւն եւ գեղանկարչութիւն: «ՀԱՅՈՐԴԱՅ»-ի մէն մի արուեստագէտ մանուկ եւ պատանի ունէր ջերմ, մանկունակ ալլ գրաւիչ դիմագծային արտայայտութիւններ, ունէր յանդուգն, անկաշկանդ ու հոգեպարար ձայնային հաղորդականութիւն, հայկական եւ օտարագրի դասական պարերու համալուծ, քնքուշ եւ սահուն կատարողութիւն, կրկեսային, գլխու պտոյտ պատճառող մարմնական ճկունութիւն, վերջապէս, ունէր «Դճոյահարներու բացառիկ շնորհ, ու տակաւին, Ստուպ ստեպլի (tap dance) Հայաստանի համար նորարար, իւրայատուկ գեղարուեստական սեռի արժանիքներ: Մօտ

Միջանկեալ յայտնենք, թէ մեր գնահատանքներն ու շնորհաւորութիւնները նաեւ կ'երթան «ՀԱՅՈՐԴԱՅԸ»-ի ընդհանուր Տնօրէն Գերշ. Գրիգոր Վրդ. Նաչատրեանին, գեղարուեստական Տնօրէն Ալտա Անդրիասեանին եւ Գեղարուեստական խորհրդատու՝ Սօսի Գէլէկեանին եւ անոնց բոլոր գործակիցներուն, որոնք իրենց հաւաքական աշխատանքով ի յայտ կը բերեն, կը քաջալերեն, կը մշակեն ու կը զարգացնեն մեր մանուկ ու պատանի նոր սերունդի տաղանդները, ի փառս մեր մշակութի բարգաւաճման:

Մեր գնահատանքները, շնորհաւորութիւնները եւ երախտագիտութիւնը կը յայտնենք մասնաւորաբար «ՀԱՅՈՐԴԱՅԸ» ի սքանչելի գաղափարը յղացող Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. ին, եւ «ՀԱՅՈՐԴԱՅԸ» ի գոյաւումը եւ պահպանումը հոգացող Հայկական Բարեգործական Միութեան:

ՎԱՍՏԱԿԱԻՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Շարունակում է շարունակվում է

1981ին կ'ընդունուի Ա.Գ. Հնչակեան Կուսակցութեան շարքերը եւ կը հանդիսանայ հիմնադիր խմբագիրը կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի շրջանի «Մասիս» շաբաթաթերթին: Երկար տարիներ կը վարէ անոր պատասխանատու խմբագրի պաշտօնը:

Նմանապէս, 1982ին կը մասնակցի հիմնադրութեան՝ «Նաւասարդ» գրական, մշակութային ամսագրին, որուն խմբագրութեան մաս կը կազմէ: Կը մասնակցի առողջապահական նոր եռամսեայի՝ «ՀայԲոյժ»ի հիմնադրութեան, ստանձնելով անոր խմբագրապետութիւնը (1993 Յունուարէն սկսեալ): Կ'ունենայ թատերական ընդունւելու թիւն, մաս կազմելով Լոս Անճելեսի սահայտարբեր թատերախումբերու:

1985 թուականին, կը հանդիսանայ հիմնադիր անդամը, Գալիֆորնիոյ Բժշկական Միութեան, կը վարէ փոխ-ատենապետի պաշտօնը, խմբագրի պաշտօն միութեան «Բժիշկ» եռամսեային:

Լոս Անճելեսի մէջ, 1993ին, իր ճիգերով կը հաստատուի Հայ Արեւմտի կեդրոնի «Արփի» հեռատեսիլային ժամը:

1993ի Դեկտեմբերին նշուեցաւ իր գործունէութեան 40-ամեայ յոբելանը:

Եղած է Ա.Գ.Հ.Կ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Երկու անգամ մասնակցած է Հայաստան-Սփիւոֆ համագործակցութեան:

Արժանացած է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շքանշանին:

Շուրջ 40 տարի բժշկական ասպարէզին ծառայել է, ներկայիս մասնագիտացած է հիմնասարու ժութեան մէջ:

Ընկ. Տօբ. Յարութիւն Սաղբեան կը մնայ պատմելի վրայ շարունակ, իր քոլորու ժերը նուիրաբերելու, որքան որ կեանքն ու պայմանները ներքին իրեն: Որոշած է իր 100-ամեակը նշել ընկերներով ու բարեկամներով...:

ԳՐԻԳՈՐ ԳՕՆՏՈՒՐԱԼԵԱՆ (Յետ Մահու)

Գրիգոր Գօնտուրալեան ծնած է 1918, Այնթապ: Կիլիկիան Վարժարանէն շրջանաւարտ եղած է 1932ին: Ամուսնացած է Ռոզին Գէորգեանի հետ եւ բախտաւորուած են չորս զաւակներով՝ Եւփիմէ, Գէորգ, Սիրանուշ եւ Զարուհի:

1946ին ներգաղթած է Հայաստան: 1962-1964 ան հետեւած է Ռուսոյցիներու կատարելագործման ինստիտուտի մանկավարժութեան եւ ապա փայտամշակման մասնագիտական դասընթացներուն:

1955-1957 դասաւանդած է Կամօ Բաղաբի կահոյճի գործարանին մէջ եւ ապա նշանակուած է նոյն գործարանի արտադրութեան ընդհանուր ղեկավար:

1958-1974 պաշտօնավարած է Երեւանի թիւ 64 դպրոցին մէջ որպէս ուսուցիչ:

1979ին ընտանեօք կը փոխադրուի Լոս Անճելես:

Հայկ. կեցութեան շրջանին եղած է Հ.Մ.Մ.ի սկաւառական շարժման ղեկավարներէն եւ ապա խմբագրի:

Կանուխէն անդամակցած է Ա.Գ. Հնչակեան Կուսակցութեան, ստանձնած է պատասխանատու պաշտօններ եւ սիրով կատարած է իրեն վստահուած կուսակցական կարեւոր առաջնութիւնները:

Գալիֆորնիա հաստատուելէն ետք եղած է Հոլիվուտի շրջանի կուսակցական մասնակցի հիմնադիր անդամը վարչութեան ատենապետ:

Եղած է անդամ Հ.Մ.Մ.ի Վեթեամեներու Միութեան:

1994ին արժանացած է Հ.Մ.Մ.ի Պատուոյ Գիրիւն, Հ.Մ.Մ.եան մեծ ընտանիքին իր բերած տասնեակ տարիներու անշահախնդիր աջակցութեան համար:

ԳՐԻԳՈՐ ԼԱԶԻՆԵԱՆ (Յետ Մահու)

Հանգուցեալ ընկ. Գրիգոր Լազինեան ծնած է Էվբերէկ 1920 թուականին: Լիբանան փոխադրուելէ ետք յանախած է Պէյրութի Սահակեան լիսէն: Դեռ պատանի տարիքին մուտք գործած է Հնչակեան Կուսակցութեան շարքերէն ներս: Եղած է նաեւ պարկեշտ եւ անխոնջ Հ.Մ.Մ.-ական մարզիկ: Յետագային դարձած է խմբագրի եւ ապա միջազգային ֆութպոլի սիրուած իրաւարար: Իր օրով Հ.Մ.Մ.ը հանդիսացած է Լիբանանի ֆուտպոլի ախոյեան: Որպէս անաչառ իրաւարար իրեն վստահուեցաւ Լիբանանի Իրաւարարներու Յանձնախումբի ատենապետութիւնը:

1985ին ընտանեօք Գալիֆորնիա փոխադրուելէ ետք ան մաս կազմեց Հ.Մ.Մ.ի Վեթեամեներու Վարչութեան եւ կուսակցական մասնակցի:

Ընկ. Գրիգոր միշտ պիտի յիշուի որպէս անբասիր եւ օրինակելի միութենական:

ԳԵՌՈՐԳ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ (Յետ Մահու)

Հանգուցեալ Գէորգ Սամուէլեան ծնած է Պէյրութ 1929ին: Յանախած է Պէյրութի Սահակեան լիսէն: Կանուխտարիքէն անդամակցած է թէ Հ.Մ.Մ.ին եւ Ա.Գ.Հ. Կուսակցութեան:

Եղած է Հնչակեան Կուսակցութեան Աղասի մասնակցի վարչութեան անդամ: Նմանապէս ան հանդիսացած է Հ.Մ.Մ.ի ֆուտպոլի Ա. խումբի աչքի գարնող լաւագոյն մարզիկներէն մին, մասնակցելով տեղական եւ միջազգային մրցումներուն:

1975ին Ամերիկա հաստատուելէ ետք կը հիմնէ իր անձնական կնոջական կօշիկներու արտադրութեան գործարանը:

Այս հիւրընկալ արհեստը հաստատուելէ ետք Գէորգ Սամուէլեան նիւթապէս եւ բարոյապէս սատար հանդիսացած է մեր կազմակերպութեան:

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ Վ Ի Գ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի նպաստ Նոր Հաճոյ Մեծն Սուրատ դպրոցին

Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350
 Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան
 Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ
 Գ. Պարգել՝ 42" Plasma TV

Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00ին
Verdugo Hills Country Club
400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202

Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով

Նուէր՝ \$100
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

ՄԱՐՁԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտպոլի առաջնութեան 28-րդ հանգրուաններու մրցումներուն արդիւնքները

Նոյեմբեր 10

| | |
|------------------|-----|
| Միկա - Գանձասար | 1-0 |
| Շիրակ - Փիւնիկ | 2-0 |
| Կիլիկիա - Բանանց | 0-6 |
| Ուլիս - Արարատ | 2-2 |

Խումբերու դասաւորումը

| | Խաղ | Յաղթ. | Հաւս. | Պարտ. | Կոլ | Միակոր |
|-------------|-----|-------|-------|-------|-------|--------|
| 1. Փիւնիկ | 28 | 18 | 3 | 7 | 58-22 | 57 |
| 2. Բանանց | 28 | 16 | 4 | 8 | 56-26 | 52 |
| 3. Միկա | 28 | 14 | 8 | 6 | 42-24 | 50 |
| 4. Արարատ | 28 | 15 | 4 | 9 | 49-42 | 49 |
| 5. Գանձասար | 28 | 11 | 6 | 11 | 35-31 | 39 |
| 6. Շիրակ | 28 | 9 | 7 | 12 | 27-37 | 34 |
| 7. Ուլիս | 28 | 8 | 6 | 14 | 21-46 | 30 |
| 8. Կիլիկիա | 28 | 1 | 2 | 25 | 10-70 | 5 |

ԱՆՈՅԵԱՆԻ ԿՈՉՈՒՄԸ 7-ՐԴ ՏԱՐԻՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՆՈՒԱԾԵՑ «ՓԻՒՆԻԿԸ»

Աւարտուեց 2007թ. ֆուտպոլի Հայաստանի առաջնութիւնը, որը իր տարբերութիւն նախորդ տարիների անցաւ անհամեմատ հետաքրքիր պայքարում, թէեւ ախոյեանի կոչումը 7-րդ տարին անընդմէջ նուաճեց «Փիւնիկը»:



Առաջնութեան մեկնարկից պարզ դարձաւ, որ մրցանակային տեղերի համար պայքարելու են «Փիւնիկը», «Բանանցը», «Արարատը» եւ «Միկան»: 1-ին շրջաններում յատկապէս հիացրեց «Արարատը», որը վարուժան Սուքիասեանի գլխաւորութեամբ բաւական գրաւիչ խաղ էր ցուցադրում եւ մի պահ սկսեց գլխաւորել մրցաշարային աղիւսակը: Սակայն Սուքիասեանի հեռանալուց յետոյ «Արարատը» զիջեց դիրքերը՝ կրելով մի շարք խոշոր հաշուով պարտութիւններ:

Մեծ տպաւորութիւն թողեց նաեւ «Բանանցի» խաղը 3-4-րդ շրջաններում, երբ թիմը գլխաւորում էր բուլղարացի Նիկոլայ Կոստովը: Բուլղարացի մասնագէտի գլխաւորութեամբ «Բանանցը» 7 խաղում անընդմէջ «չոր» հաշիւներով յաղթանակներ տուեց, սակայն անպասելիօրէն պարտուեց «Ուլիսին» եւ «Գանձասարին»: Առանձնապէս աչքի չընկաւ «Միկան», որը վերջին տուրում շրջանցելով «Արարատին»՝ արժանացաւ բրոնզի:

Պէտք է ընդգծել, որ ինչպէս եւ 2006թ. առաջնութիւնում, այնպէս էլ 2007թ. 1-ին 5 հորիզոնականներում թիմերը զբաղեցրեցին նոյն հորիզոնականները. 1. «Փիւնիկ», 2. «Բանանց», 3. «Միկա», 4. «Արարատ», 5. «Գանձասար»:

Լաւագոյն քառեակի թիմերից ժամանակ առ ժամանակ միաւորներ էին խլում «Գանձասարը», «Շիրակը» եւ «Ուլիսը»: Վերջինս 3-4-րդ շրջաններում բաւական յաջող հանդէս եկաւ: Եթէ «Ուլիսը» նոյնպէս հանդէս գար նաեւ 1-2-րդ շրջաններում, ապա կարող էր պայքարել նաեւ մեդալների համար: Իսկ «Գանձասարը» մի պահ յաւանանում էր 4-րդ հորիզոնականին, սակայն Սամուէլ Պետրոսեանի թիմը կարողացաւ պահպանել իր տեղը լաւագոյն քառեակում:

Հայ ֆուտպոլիստներին խորը հիասթափութիւն պատճառեց Երեւանի «Կիլիկիան»: Աշոտ Աղաբաբեանին պատկանող այս թիմը 28 հանդիպումներում ընդամենը 5 միաւոր վաստակեց՝ սեփական դարպասը ընդունելով 70 գնդակ:

Հայաստանի 2007թ. առաջնութիւնում կայացած 112 հանդիպումներում արձանագրուեց 293 դարպասի գրաւում (միջինը մէկ խաղում՝ 2.62 գոլ), որոնցից 151-ի հեղինակը դաշտի տէրերը, իսկ մնացած 142-ը՝ հիւրերը: Ամենատարածուած արդիւնքը 2:0 հաշիւն էր: Նման հաշիւ գրանցուեց 21 հանդիպումներում: 19 խաղ աւարտուել է 1:0 հաշուով: Դարպասի գրաւում չի արձանագրուել 12 խաղում:

ՃՈՒԴՈՅԻ «ԳՐԱՆ ՊՐԻ» ՄՐՑԱՇԱՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանում աւարտուեց ճիւղային «Գրան Պրի» մրցաշարը, որին մասնակցում էին 10 երկրների ամենատիտղոսակիր մարզիկները:



60կգ քաշային կարգում յաղթողի կոչումը նուաճեց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Գրեյգ Ֆալոնը, որը եզրափակիչում առաւելութեան հասաւ հայ ճիւղային Յովհաննէս Դաւթեանի նկատմամբ: Բրոնզէ մեդալների արժանացան վրացի Նեստոր Սերջիան եւ հունգարացի Լազլօ Բուրգան:

66կգ քաշայինների պայքարում յաջողութեանը մօտ էր Արմէն Նազարեանը, սակայն Հայաստանի ներկայացուցիչը եզրափակիչում պարտուեց սերբ Միրոս Մինիսալկովիչին: Բրոնզէ մեդալների արժանացան Յունաստանի ներկայացուցիչ Ռեմկա Ջինտրիլիսը եւ ուկրաինացի Սերհիյ Դիբոտը:

81կգ քաշային կարգում յաղթեց Ուկրաինայի ներկայացուցիչ Ռոման Գոնչիլկը, որին յաջորդեց վրացի Դաւիթ Կելիսիճիլիին: Մեծ Բրիտանիան ներկայացնող Թոմ Ռիդը եւ էստոնացի Բարտոնը արժանացան բրոնզէ մեդալների:

Մրցաշարի մրցանակային հիմնադրամը կազմել էր 100 հազար դոլար: Յաղթողները ստացան 20-ական հազար տոլար պարգեւ:

ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտպոլի առաջնութեան 13-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|--------------------------|-----|-----------------------------|-----|
| Սանտըրլէնտ - Նիւքասլ | 1-1 | Պոլթըն - Միտլըզպորո | 0-0 |
| Լիվըրպոլ - Ֆուլհամ | 2-0 | Թոթեմհամ - Ուիկան Աթլ. | 4-0 |
| Ռիսինկ - Արսենալ | 1-3 | Պըրմինկլիէմ - Ասթոն Վիլլա | 1-2 |
| Չելսի - Էվըրթըն | 1-1 | Տերափ Բաուլմօր - Ուէսթ Յամ | 0-5 |
| Փորթսմութ - Մանչեսթըր Ս. | 0-0 | Մանչեսթըր Եուն. - Պլէյպալըն | 2-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|-----------------|----|---|---|---|-------|----|
| Արսենալ | 12 | 9 | 3 | 0 | 27-10 | 30 |
| Մանչեսթըր Եուն. | 13 | 9 | 3 | 1 | 23-6 | 30 |
| Մանչեսթըր Սիթի | 13 | 8 | 2 | 3 | 16-13 | 26 |
| Չելսի | 13 | 7 | 4 | 2 | 19-9 | 25 |
| Լիվըրպոլ | 12 | 6 | 6 | 0 | 19-6 | 24 |
| Փորթսմութ | 13 | 6 | 5 | 2 | 23-13 | 23 |
| Պլէյպալըն | 12 | 6 | 4 | 2 | 15-11 | 22 |

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտպոլի առաջնութեան 13-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|----------------------------|-----|-----------------------------|-----|
| Շթուքլարթ - Պ. Միւնխի | 3-1 | Վարտըր Պրէյմըն - Քարլսրուհէ | 4-0 |
| Տորթնուտ - Այնթ. Ֆրանքֆորթ | 1-1 | Տուկզպուրկ - ՎՖԼ Պոխտում | 0-2 |
| Արմ. Պիլըֆէլտ - Նիւրնպերկ | 3-1 | Յերթա Պերլին - Յանովեր-96 | 1-0 |
| Վոլսպուրկ - Պ. Լիվերքուզըն | 1-2 | Շալքէ-04 - Յամպուրկ | 1-1 |
| Ռոսթոք - Քոթայիս | 3-2 | | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|----------------|----|---|---|---|-------|----|
| Պայերն Միւնխի | 13 | 8 | 4 | 1 | 28-7 | 28 |
| Վարտըր Պրէյմըն | 13 | 8 | 3 | 2 | 30-17 | 27 |
| Յամպուրկ | 13 | 8 | 3 | 2 | 20-10 | 27 |
| Քարլսրուհէ | 13 | 7 | 2 | 4 | 14-15 | 23 |
| Պ. Լիվերքուզըն | 13 | 6 | 3 | 4 | 20-10 | 21 |
| Յանովեր-96 | 13 | 6 | 3 | 4 | 17-17 | 21 |
| Շալքէ-04 | 13 | 4 | 7 | 2 | 18-12 | 19 |

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտպոլի առաջնութեան 12-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|-----------------------|-----|-------------------------|-----|
| Փարմա - Եուվեթուս | 2-2 | Թորինօ - Քաթանիա | 1-1 |
| Սամտորիա - Էմպոլի | 3-0 | Ռեճինա - Ճենովա | 2-0 |
| Փալերմօ - Նափոլի | 2-1 | Ինթըր Միլան - Լացիօ | |
| Սինեա - Լիվորնօ | 2-3 | Աթալանթա - Ա. Սէ. Միլան | |
| Ֆիորենթինա - Ուտինէզէ | 1-2 | Ա. Էս. Ռոմա - Քալիարի | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|-------------|----|---|---|---|-------|----|
| Ինթըր Միլան | 11 | 7 | 4 | 0 | 22-7 | 25 |
| Ֆիորենթինա | 12 | 6 | 5 | 1 | 19-9 | 23 |
| Եուվեթուս | 12 | 6 | 4 | 2 | 24-13 | 22 |
| Ա. Էս. Ռոմա | 11 | 6 | 4 | 1 | 25-16 | 22 |
| Ուտինէզէ | 12 | 6 | 4 | 2 | 14-13 | 22 |
| Աթալանթա | 11 | 4 | 6 | 1 | 15-13 | 18 |
| Փալերմօ | 12 | 4 | 6 | 2 | 17-16 | 18 |

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտպոլի առաջնութեան 12-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|--------------------------|-----|-------------------------|-----|
| Էսփանիոլ - Աթլէթ. Պիլպաօ | 2-1 | Վիլլառէալ - Սեւիլլա | 3-2 |
| Յուլէպլա - Օսասունա | 1-0 | Ռէալ Պաթիս - Սարակոսա | 2-1 |
| Վալենսիա - Ռէալ Մուրսիա | 3-0 | Ռէալ Վալադոլիտ - Լեվանթ | 1-0 |
| Տեպ. Քորունա - Ռասինկ | 0-1 | Ռէալ Մատրիտ - Մայորքա | 4-3 |
| Ալմերիա - Աթլէթ. Մատրիտ | 0-0 | Կեթաֆէ - Պարսելոնա | 2-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---------------|----|---|---|---|-------|----|
| Ռէալ Մատրիտ | 12 | 9 | 1 | 2 | 29-13 | 28 |
| Վիլլառէալ | 12 | 9 | 0 | 3 | 25-18 | 27 |
| Պարսելոնա | 12 | 7 | 3 | 2 | 23-10 | 24 |
| Վալենսիա | 12 | 8 | 0 | 4 | 20-19 | 24 |
| Էսփանիոլ | 12 | 6 | 4 | 2 | 17-13 | 22 |
| Աթլէթ. Մատրիտ | 12 | 6 | 3 | 3 | 23-14 | 21 |
| Ռասինկ | 12 | 5 | 5 | 2 | 10-9 | 20 |

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտպոլի առաջնութեան 13-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|-------------------------------|-----|-------------------|-----|
| Նանսի - Պորտօ | 1-0 | Քան - Լը Մանս | 3-2 |
| Մարսէյ - Լորիան | 0-0 | Թուլուզ - Մեթց | 0-0 |
| Սթրասպուրկ - Փարիզ Սէն ժերմեն | 1-2 | Օքսէ - Լիլ | 0-1 |
| Լիոն - Վալանսիէ | 2-0 | Լանս - Սէնթ Էթիէն | 3-2 |
| Րընէ - Մոնպօ | 0-1 | Նիս - Սոշօ | 0-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|------------|----|----|---|---|-------|----|
| Լիոն | 13 | 10 | 1 | 2 | 29-12 | 31 |
| Նանսի | 12 | 8 | 3 | 1 | 20-7 | 27 |
| Րընէ | 13 | 7 | 3 | 3 | 17-10 | 24 |
| Պորտօ | 13 | 6 | 4 | 3 | 16-12 | 22 |
| Լը Մանս | 13 | 6 | 2 | 5 | 18-18 | 20 |
| Սթրասպուրկ | 13 | 5 | 4 | 4 | 15-10 | 21 |
| Նիս | 13 | 5 | 4 | 4 | 13-10 | 19 |

ՄԱՐԱԶԴ

ՅԱԿՈՒ ՍԵՄԵՐՃԵԱՆ (ԾՆԱԾ՝ 1914, ԱՅՆԹԱՊ)

Սրտի կակիծով կը գոլթենք մեր սիրելի հօր՝ ՅԱԿՈՒ ՍԵՄԵՐՃԵԱՆի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Նոյեմբեր 2, 2007ին, Թորոնթոյի մէջ յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի, Նոյեմբեր 6ին, Թորոնթոյի Սուրբ Երրորդութիւն եկեղեցիի մէջ, ի ներկայութեան Արժ. Տ. Զարհե Քհնյ. Զարգարեանի, ապա թաղումը կատարուեցաւ Թորոնթոյի Եորք գերեզմանատան մէջ, հարազատներու եւ բարեկամներու ներկայութեան:

Յակոբ Սեմերճեանի մահը կը սգան զաւակները՝

Վաչէ եւ Սօսի Սեմերճեան (Կլէնտէյլ)

Շահէ եւ Մարկօ Սեմերճեան (Թորոնթօ)

Լեւոն եւ Արփի Եագրճեան (Օրօրա, Գանատա)

Ինչպէս նաեւ Սեմերճեան, Պերդուտեան, Օզգանեան եւ Եագրճեան ընտանիքները:

Ընտանիքին փափաքով, Յակոբ Սեմերճեանի յիշատակը յարգող գալիֆորնիաբնակ բարեկամներէն կը խնդրուի նուիրատուութիւնները ընել «Նոր Օր» շաբաթաթերթին, որու հաւատարիմ ընթերցողներէն էր հանգուցեալը:

ՅԱԿՈՒՅԱԿԱՆ

ՀՐԱԶ ՊԱԼԱՅԵԱՆԻ վաղահաս մահուան տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար իր հօր՝ մեր պաշտօնակից «Քաջ Նազար» երգիծաթերթի Տէր եւ Տնօրէն Յովհաննէս Պալայեանին, ինչպէս նաեւ հօրեղբօր Տէր եւ Տիկ. Ներսէս Պալայեանին եւ համայն պարագաներուն:

ՀՐԱԶ ՊԱԼԱՅԵԱՆԻ դառնաղէտ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին, հարազատներուն, մասնաւորաբար հօր «Քաջ Նազար» երգիծաթերթի խմբագիր՝ Յովհաննէս Պալայեանին:

ՅԱԿՈՒՅԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐ ԱՃԷՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»-ի ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար իր դստեր՝ Տէր եւ Տիկ. Սալբի եւ Ժիրայր Կէտէրեանին:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՇՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ

(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ԶՐԵՍԵՆԹԱ)

ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

Հայ Թելեժամբ Կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 Ժամ այլ Օրուան 24 Ժամբըը

Շաբաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել
Հայկական Թելեժամ (818) 982-2400

The Armenian Teletime Is Back On Channel 18

Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day

7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

ԻՐԱՆԱՇԱՅ ԿՈՐՈՒՄՏԵՐ ԱՐՏՈՒՇ ՄԻՐԶԱՅԵԱՆ (ՄԱՇՈՒՄ 40-ՕՐԵԱԿԻ ԱՌԹԻ)

Սրանից 40 օրեր առաջ կեանքից հեռացաւ գաղութի սիրուած ազգայիններից Արտուշ Միրզայեանը, խորը վիշտ պատճառելով իր անմիջական հարազատներին, բարեկամներին եւ ընկերներին: Հանգուցեալը ծնուել էր 1929 թուի Փետրուար ամսուայ 7ին Ղազուի նոմ: Նախնական եւ միջնակարգ կրթութիւնը ստացել էր իր ծննդավայրում: Զինուորական ծառայութեան աւարտից յետոյ պաշտօնի էր անցել Ղազուի երկաթուղային հիմնարկի հիւանդանոցում որպէս դեղագործ: Մեծ հետաքրքրութիւն ունէր հայ դպրոցի նկատմամբ եւ աշխատում էր մեր մանուկներին փոխանցել հայոց լեզուն: 1945 թուերին Ղազուի նոմ մի խումբ ընկերների հետ հիմնում է հայ պատանեկան մշակութային միութիւնը, որն իր գոյութեան ընթացքում ունենում է փայլուն եւ օգտաշատ գործունէութեան:

Ապա հրաւիրուում է Քերմանշահ, տեղի «Արիան» դպրոցում հայոց լեզու դասաւանդելու համար եւ յաջորդ տարի նշանակուում է նոյն դպրոցի տեսուչ, միանգամայն գոհ թողնելով ազգային մարմիններին եւ ծնողներին: Փոխադրուելով Թեհրան մի քանի տարի պաշտօնավարում է հայոց դպրոցներում:

Արտուշ Միրզայեանը սիրով կապուած էր հայ լեզուին եւ մշակոյթին: Պատանի տարիքից աշխատակցում էր «Ալիք» օրաթերթին գրելով թղթակցութիւններ,



ճամբորդական տպաւորութիւններ եւ բնաստեղծութիւններ: Ունենալով երգիծանքի ունակութիւն, գրել էր բազմաթիւ երգիծական յօդուածներ որոնք տպագրուել են «Յախաւել» եւ «Քաջ Նազար» երգիծաթերթերում Ա. Միրզայեանի ծածկանունով:

Սիրելի Արտուշը ամուսնացել էր շնորհալի դաշնակահար էլիանորա Կարապետեանի հետ: Ունէր երկու զաւակ, որոնք ստացել էին համալսարանական կրթութիւն եւ այսօր օգտակար անձեր են մեր համայնքում: Ազնուասիրտ եւ մարդկային բարի յատկութիւններով օժտուած Արտուշ Միրզայեանի մահը սպացին իր հարազատները եւ բոլոր նրանք որոնք ճանաչում էին նրան:

Թող հողը թեթեւ լինի վրադ, սիրելի Արտուշ:

Մի Ընկեր

«ԱՐՄԵՆ» ԿԱՐՃԱՍԵԹՐԱԺ ՇԱՐԺԱՆԿԱՐԸ

Շաբուկաւուած էջ 14-էն

ըրբերող երեւոյթ մը՝ չիշեցնելով թէ «Յեղաապանութիւնը տղեղ պատկերն է այն բանի, ինչ կրնայ մարդարարածը կատարել մարդ արարածին՝ մղուած ազահութենէ, վախէ ու չիմարութենէ»:

Շարժանկարը, թէեւ աւարտաճառ մը, սակայն շատ աւելի է քան ինչ որ կը թուի, ապացոյց՝ առաջին խանդավառ քաջայերանքները Շերրիին ստացուած են իր... օտար բարեկամներէն ու գործընկերէն, փոխանակ հայերէ - Մ.Գ.Օ: Հետեւաբար, ինչպէս կը պատմեն ինծի իր հետ աշխատող խումբի անդամները, քիչ մը ծախսով կամ նիւթական ներդրումով «Արմէն»ը կարելի է ներկայացնել Student Oscar-ի եւ Cannes-ի սոյն կարգի պատկանող շարժանկարներու ցուցադրութեան:

Նոր Սերունդը Շերրիներն են,

որոնք կրնային այլ համամարդկային հարցեր շօշափող նիւթերու մասին միասեռականութիւն, վիժում, ցեղային խտրականութիւն, ծնողական չարաշահում եւ այլն ժապաւէններ պատրաստել եւ դիւրաւ գտնել մեծագումար ներդրումներ ամերիկեան եւ այլ կարգի վարկերէ ու յատկացումներէ, սակայն անոնց մէջէն ձայն մը կ'ըսէ իրենց, ձայն մը փոխանցուած մեծամայրիկէն ու մեծ հայրիկէն, թէ «այդքան չարիք թէ մոռնան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարգայ նախատինք»:

Տողերուս հեղինակը, հայոց լեզուի, գրականութեան, պատմութեան ու հայ մշակոյթի երեսնամեայ ուսուցիչս, կոչ կ'ընեմ շուտափոյթ կերպով օգնութեան նախնիներու սրբազան պատգամին: Կրնաք մեզի հետ կապի մէջ մտնել հեռաձայնելով (818) 782-7437 համարին:

«ՐԱՅ ՖԵՍ» 5-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

Շաբուկաւուած էջ 14-էն

Ծափահարութիւններով, քանի որ վախ կար՝ մարմնի մկանի մէկ շարժ կամ երաժշտութեան մէկ հնչիւն բաց թողնելու: Ասես հանդիսատեսից ամէն մէկն ինքն էր մէկ ազատուած մէկ ներփակուած, ամէն մէկն ինքն էր սալամանդըր ու զանգերի զօղանջի ներքոյ ինքն էր իր երազի գրկում:

Սա մէկն էր այն ներկայացումներէից, որի մասին դժուար է խօսել աւարտից անմիջապէս յետոյ, բայց այն մտում է ինչ-որ տեղ՝ ներսում:

Փառատօնի աւարտին հնչեցին շնորհակալութիւններ փառատօնին կամաւոր աջակցողների հասցէին, տրուեցին յաղթողների անունները: Արթուր Ղուկասեանը չմոռացաւ փայտի թխկոցով խափանել չարը, քանի որ վերջապէս 5-րդ փառատօնը պետութեան կողմից ուղարկութեան արժանացաւ: Փակման բաւականին համեստ արարողութիւնը տեղի ունեցաւ Տիկնիկայի թատրոնի փոքրիկ սպասարանում:

10-րդ Մ ի ջ ա գ գ ա յ ի ն

Հայաստան Համահայկական Հիմնադրամ **Թեկերոն 2007**

Մեկ Ազգ / Մեկ Ապագայ



Գոհարանուրեան Օր
Նոյեմբեր 22, 2007

KSCI-LA 18 8am-8pm PST
Տեղեկութեան համար հեռաձայնել
1-800-888-8897

Կայքէջ
www.armeniasfund.org